

ՄԵՐ ԱՆԿԻՒՆԵՆ

«Արարատ» Օրաթերթը 80 Տարեկան

Այս տարի կը նշուի Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցության Լիբանանի պաշտօնաթերթ «Արարատ» օրաթերթի 80-ամեակը: Կուսակցության երիցագոյն այս օրկանը անցած է փառահեղ սակայն միեւնոյն ժամանակ դժուար ճանապարհ: Սկսեալ առաջին խմբագիրի սպանութենէն, անցնելով պետական սպասարկութիւններու հալածանքները, խմբագրատան ռմբահարումն ու կործանումը ան յաղթահարած է բազում դժուարութիւններ: Այս բոլորով հանդերձ «Արարատ» մնացած է պատմելի վրայ՝ իր յստակ սկզբունքայնութեամբ եւ ուղեգիծով, որոնք կու գան Մայր Կուսակցութեան գաղափարական ակունքներէն:

Տասնամեակներ շարունակ «Արարատ» իր ընթերցողներուն ներկայացած է ճակատաբաց, որպէս ճշմարիտ խօսքի, խիզախ մտքի, յստակ կարծիքի արտայայտիչ ու ջահակիր: Անոր հիմնական առաքելութիւնը եղած է Միջին Արեւելքի հայ գանգուածներուն մօտ վառ պահել ազգային արժեքներն ու հայրենիքին կառչած մնալու գաղափարը:

Հնչակեան պատմութիւնը հարուստ է մամուլի իր օրկաններով, որոնք լոյս տեսած են աշխարհի բոլոր այն ժագերուն վրայ, ուր կուսակցութիւնը գործած է անցնող 130 տարիներու ընթացքին: Հարիւրաւոր մամուլի օրկաններուն մէջ, «Արարատ» կը գրուէ իւրայատուկ տեղ: Տասնամեակներու ընթացքին թերթի խմբագիրները եղած են գրչի ու գաղափարի, հայրենասիրութեան ու համամարդկայնութեան նուիրեալներ: Անոնց անունները ոսկի տառերով արձանագրուած են հայ մամուլի պատմութեան էջերուն վրայ, սկսեալ Գահատակ Միհրան Աղազարեանէն, Արմենակ Էլոյեան, Ասատուր Էլճանեան, Ժիրայր Նայիրի եւ ուրիշներ:

Վերջին տարիներուն թերթի հրատարակութեան աշխատանքները վստահուած են իզական սեռի ներկայացուցիչ Անի Եփրեմեանին, որու առաջնորդութեամբ «Արարատ» կը նուաճէ նոր բարձունքներ, իր արդիական, բազմատեսակ բովանդակութեամբ ու նաեւ շքեղագարդ իր բացառիկներով, որոնք կու գան ճոխացնելու հայ տան գրադարանները:

Հնչակեան իւրաքանչիւր մամուլին վերապահուած է յատուկ դեր: «Արարատ» օրաթերթը կը գտնուի իր այդ դերին մէջ ու գայն կը շարունակէ կատարել պատուով:

80-ամեակին առթիւ «Մասիս» կը շնորհաւորէ իր երէց օրկանն ու անոր բոլոր նուիրեալները:

«ՄԱՍԻՍ»

Թրանսփարընսի Ինթըրնաշնլի Համաձայն Հայաստանի Ընտրութիւններու Ընթացքին Գլխաւոր Դերակատարը Եղած է Ընտրակաշառքը

Թրանսփարընսի Ինթըրնաշնլի հակակաշառակերութեան կեդրոնը (ԹԻՀԿ) հրապարակեց Հայաստանի խորհրդարանական ընտրութիւններուն մասին իր գեկոյցը, որու համաձայն վարչական միջոցներու չարաշահման եւ այլ ընտրական խախտումներու կողքին ամէնէն շատ արձանագրուած է ընտրակաշառքի դէպքերը:

ԹԻՀԿ ծրագիրներու ղեկավար Վարուժան Հոկտանեան ներկայացնելով իրենց ուսումնասիրութիւններու արդիւնքները, մտահոգութիւն յայտնեց, որ Հայաստանի մէջ ընտրակեղծարարութիւնը ստացած է համակարգային բնոյթ, եւ իրենք չեն ալ ակնկալեր, որ իրենց արձանագրած փաստերը կը յանգեցնեն լուրջ արդիւնքներու:

Հոկտանեան յայտնեց, որ իրենց տուեալներով, ընտրակաշառք հիմնական բաժնողը եղած է իշխող ՀՀԿ-ն: Ընտրակաշառք բաժնած են նաեւ «Հայկական Վերածնունդը», ԲՀԿ-ն եւ որոշ պարագաներու Դաշնակցութիւնը:

«Յաւօք, իրաւապահ մարմիններէ՛ տարիներ շարունակ քրտնջոյց է տալիս, որ դրանք կամ չեն հաստատուած, կամ եթէ հաստատուած էլ են, շատ աւելի սահմանափակ մաշտապներով, իսկ արձա-



ԹԻՀԿ ծրագիրներու ղեկավար Վարուժան Հոկտանեան

նագրուած խախտումներէ՛ իրաւապահներէ կողմից բնութագրուածը զանցանքներէից այն կողմ չի գնում», ըսաւ Հոկտանեան:

Հոկտանեան տեղեկացուց, որ կիրառած են միջազգային մեթոտաբանութիւն, որպէսզի արդիւնքները համադրելի ըլլան այլ երկիրներու մէջ նմանատիպ ստուգողական ծրագիրներու հետ: Կիրառուած է լրատուամիջոցներէն քաղուած տեղեկութիւններու ուսում-

Շար.ը էջ 4

Ղարաբաղի Բանակը Դիմած է Պատասխան Գործողութիւններու

Յուլիս 4-ի երեկոյեան, Լեւոնային Ղարաբաղի պաշտպանութեան բանակի յառաջապահ զորամասերը ստիպողութեան առջեւ գտնուած են պատասխան գործողութիւններ ձեռնարկելու թշնամիի ուղղութեամբ, որու արդիւնքում վնասուած է Ալիսանլու գիւղին մէջ տեղակայուած կրակակէտին:

Պաշտպանութեան Բանակի լրատուական ծառայութիւնը յաղորդելով այս մասին կը տեղեկացնէ որ, համապատասխան ծառայութիւններուն կողմէ տրամադրուած հաւաստի տուեալներով, հակառակորդը ունի կորուստներ:

Մամուլի ծառայութիւնը աւելի կանուխ տեղեկացուցած էր, որ Յուլիս 4-ին շփման գծի տարբեր հատուածներուն վրայ, ատրպէյճանական կողմը կը շարունակէ խախտել հրադադարը:

«Մասնաւորապէս, ժամը 11:30-11:35 սահմաններում արեւելեան ուղղութեամբ ատրպէյճանական կողմը կիրառել է 82 միլիմետրանոց ականանետ (4 արկ), նոյն հատուածում ժամը 12:45-12:55-ի սահմաններում՝ հաստոցաւոր հակատանկային նռնականետ (3 արկ)», - ըսուած է Պաշտպանութեան Բանակի հաղորդագրութեան մէջ:

Մերքէլի Կուսակցութիւնը Դէմ է Թուրքիոյ Եւրոպական Միութեան Անդամակցութեան

Գերմանիոյ վարչապետ Անկէլա Մերքէլի գլխաւորած Քրիստոնեայ-դեմոկրատական կուսակցութեան եւ Քրիստոնեայ-ընկերային միութիւններու կուսակցութեան դաշինքը դէմ արտայայտուած է Թուրքիոյ Եւրոպական Միութեան լիիրաւ անդամակցութեան:

Թրքական «Հիւրընկէթ»-ի հաղորդմամբ, Գերմանիոյ մէջ խորհրդարանական ընտրութիւններէն երեք ամիս առաջ կուսակցութիւնները հրապարակած են իրենց նախընտրական ծրագիրները, ուր յատուկ անդրադարձած են նաեւ Թուրքիոյ հետ յարաբերութիւններուն:

Հակառակ անոր, որ իշխող դաշինքի նախընտրական ծրագիրին մէջ ընդգծուած է Թուրքիա-ԵՄ ռազմավարական ու տնտեսական յարաբերութիւններու կարեւորութիւնը, այնուամենայնիւ Մերքէլի ղեկավարած քաղաքական ուժը դէմ է եւրոպական ընտանիքին Թուրքիոյ անդամակցութեան:

Շար.ը էջ 5

36 Գոնկրեսականներ Կը Պահանջեն Զէնք Չվաճառել Թուրքիոյ

Ամերիկացի 36 գոնկրեսականներ Պետական Քարտուղար Ռեքս Թրիքսընին երկուսակցական նամակ ուղարկած են, դէմ արտայայտուելով Թուրքիոյ նախատեսուող գէնքի վաճառքին՝ հաշուի առնելով խաղաղ ցուցարարներու դէմ Թուրքիոյ անվտանգութեան ծառայախումբի դաժան յարձակումները ԱՄՆ մայրաքաղաքին մէջ, կը հաղորդէ Ամերիկայի Հայկական Համագումարը:

«Այստեղ, ԱՄՆ հողին վրայ, ականատես եղանք նախագահ էրտողանի կողմէ ժողովրդավարութեան նկատմամբ ակնյայտ անյարգալից վերաբերմունքի, երբ անոր հրոսակները դաժանաբար յարձակեցան խաղաղ ցուցարարներուն վրայ: Որպէս ամբողջ աշխարհի մէջ ազատութեան եւ անկախութեան տիպար՝ ԱՄՆ չի կրնար թողտուութիւն տալ ժողովրդավարութեան այդպիսի բացայայտ ճնշման հետ եւ այս առաջարկուած



սպառազինութիւններու գործարքը կը նշանակէ ոչ այլ ինչ, քան էրտողանի հրոսակներու դաժան յարձակման սատարում», ըսուած է գոնկրեսականներու նամակին մէջ:

Անցեալ ամիս էրտողանի թիկնապահները Ուաշինկթընի մէջ դաժանօրէն յարձակած էին խաղաղ ցուցարարներու վրայ, մինչ նախագահ էրտողան մի քանի քայլ հեռու հետեւած էր, թէ ինչպէս իր անվտանգութեան ծառայախումբի գիւնուած անդամները դաժան յարձակում կը սանձազերծեն ընդդէմ խաղաղ ցուցարարներուն եւ Ամե-

Շար.ը էջ 5

ՎԱՅԱՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Սերժ Սարգսեան Վաստահեցուց Որ Նոր Փուլը Կ'անցնի Առանց Ցնցումների

«Կառավարութիւնը նոր շրջափուլ է սկսել, որը պէտք է անցնի հնարաւորինս անցնելով»:



Նախագահ Սարգսեան կառավարութեան նիստի ընթացքին

Նախագահ Սերժ Սարգսեանը, որ կառավարութեան ծրագրի հաստատումէն ետք, առաջին անգամն կը մասնակցէր գործադիր նիստին, եւս մէկ անգամ յայտարարած է, որ իշխող Հանրապետականը ամբողջութեամբ կը սատարէ վարչապետ Կարէն Կարապետեանին:

պետ Կարէն Կարապետեանի գլխաւորութեամբ, կը վայելէ իմ եւ մեր ամբողջ քաղաքական թիմի լիակատար վստահութիւնը»:

Երբ Սարգսեանը արդէն կը հեռանար, վարչապետը անձամբ անոր ուղեկցած է մինչեւ ծառայողական մեքենան: Լրագրողներու հարցին ալ՝ 2018-էն ետք ի՞նչ պիտի ըլլայ վարչապետը, Կարապետեանը չէ արձագանգած:

«Սերունդների Բաժինն Են Ուտում» Բնապահպանները կը բողոքեն Սեւանէն Յաւելեալ Ջուր Առնելու Ծրագրին Դէմ

Խումբ մը բնապահպանական կազմակերպութիւններու ներկայացուցիչներ եւ քաղաքացիներ բողոքի ելք կազմակերպած են Հայաստանի խորհրդարանի շէնքին դիմաց՝ պատգամաւորներէն պահանջելով չընդունիլ Սեւանէն յաւելեալ 100 միլիոն խորանարդ մետր ջուր բաց թողելու մասին օրէնքի նախագիծը:

կողուպցիոն ուիք է, դրա հաշուին էլ շահոյթ են ստանալու, ելեկտրաէներգիա են արտադրելու, եւ դա գնալու է ինչ-որ մէկի գրպանը», - «Ազատութեան» ըսած են երթի մասնակից բնապահպանները:

Ըստ նախագիծին, լրացուցիչ ջրառէն ուսական ընկերութեան պատկանող սահանքը տարեկան մօտ 100 միլիոն քիլօտակ յաւելեալ ուժանիւթ կ'արտադրէ: Բնապահպանները չեն հաւատար կառավարութեան հաւաստիացման, թէ առաջացած եկամուտը պիտի փոխանցուի պետութեան արտապիտանէթային հաշիւին:

«Կառավարութիւնն աչքը տնկել է բնական ռեսուրսների վրայ, որը մերը չէ: Այս բնութիւնը մենք որպէս ժառանգութիւն չենք ստացել, այլ պարտք ենք ստացել մեր սերունդներին, եւ այսօր ուտում են սերունդների բաժինը, յատկապէս բնական ռեսուրսների մասով», - ըսած է բողոքի գործողութեան մասնակիցներէն մէկը:

Հակառակ այս բողոքներուն, Ազգային ժողովը վաւերացուց ջուր բաց թողելու մասին օրէնքի նախագիծը, որուն դէմ քուէարկեցին միայն ընդդիմադիր «ԵԼք» դաշինքի պատգամաւորները:

Հայաստանի Պետական Պարտքը կը Շարունակէ Աճիլ

Այս տարուայ մայիսի վերջի դրութեամբ Հայաստանի պետական պարտքը արդէն հասած է 6 միլիարտ տոլարի շեմը: Ազգային վիճակագրական ծառայութեան համաձայն՝ պետական պարտքը մայիսի վերջին կազմած է 6 միլիարտ 094.989 միլիոն տոլար: Այդ շարքին՝ արտաքին պարտքը կազմած է 4 միլիարտ 924.353 միլիոն տոլար: Ըստ տեղեկատուութեան՝ 2016 թուականի դեկտեմբերի վերջի դրու-

թեամբ պետական պարտքը կազմած էր 5 միլիարտ 942.095 միլիոն տոլար: Այս տարի ըստ ամիսներու պետական պարտքի ծաւալները աւելցած են: Մարտ ամսուն պարտքը կազմած է 5 միլիարտ 997.482 միլիոն, ապրիլին՝ 6 միլիարտ 038.671 միլիոն, իսկ արդէն մայիսի վերջին՝ 6 միլիարտ 094.989 միլիոն տոլար: Դրամային արտայայտութեամբ մայիսի վերջին պետական պարտքը կազմել է 2 տրիլիոն 935 մլրդ 956.0 մլն դրամ:

«Սասնայ ծռեր» Խումբի Անդամները Պնդած են որ Ծեծի Ենթարկուած են Ոստիկաններու Կողմէ



«Սասնայ ծռեր» զինուած խումբի անդամներու դատավարութիւնը

Ոստիկանութեան գունդի տարածքը գրաւելու մէջ մեղադրուող «Սասնայ ծռեր» զինուած խումբի անդամները պնդած են, որ դատարանի նկուղին մէջ ծեծի ենթարկուած են ոստիկաններու կողմէ: Անոնք այս մասին ահազանգած են փաստաբաններուն Երեւանի Աւան եւ Նոր Նորք վարչական շրջաններու ընդհանուր իրաւասութեան դատարանէն բանտ տեղափոխուելէ ետք:

տեղ եղել է, մօտաւորապէս 15 մարդ դաժանաբար ծեծի են ենթարկել, ընդ որում, քանի որ խուցը փոքր է եղել, հերթ են կանգնել՝ հերթով են մտել ծեծելու»:

Գլխաւոր դատախազութիւնը յայտարարած է, որ կատարուածի վերաբերեալ նիւթեր ուղարկած են Յատուկ քննչական ծառայութիւն՝ պատշաճ քննութեամբ նշուած հանգամանքները ստուգելու եւ իրաւական գնահատական տալու համար:

Ինչպէս պնդած են փաստաբանները, ոստիկանները 10-15 հոգիով ծեծի ենթարկած են «Միայնակ Գայլ» մականունով յայտնի Արայիկ Խանդոյեանին, Արեգ Կիւրեղեանին, Մխիթար Աւետիսեանին եւ Գագիկ Եղիազարեանին:

Արայիկ Խանդոյեանի փաստաբանը յանցագործութեան մասին հաղորդում ներկայացուցած է Գլխաւոր դատախազութիւն:

Մարդու իրաւունքներու պաշտպանի գրասենեակի ներկայացուցիչները գիշերը այցելած են քրէակատարողական հիմնարկներ, տեսակցած «Սասնայ ծռերու» անդամներուն հետ: ՄԻՊ գրասենեակը հաղորդած է, որ արձանագրած են վնասուածքներ, որ նշուած բոլոր տեղեկութիւնները կը պարունակեն յանցագործութեան առերեւոյթ յատկանիշներ, եւ անհրաժեշտ է անյապաղ քննել կատարուածը:

Ոստիկանութեան մամուլ քարտուղար Աշոտ Ահարոնեանը ի պատասխան «Ազատութեան» հարցին, թէ ինչ պարզաբանում կրնայ տալ ոստիկաններու հասցէին հնչած այս մեղադրանքներուն, ըսած է միայն, որ պաշտօնայի կողմէ ծեծի դէպքը իրենց վարչութիւն մէջ չի կրնար քննուիլ:

ԼՂ Նախագահի Պաշտօնին Առաջադրուած Է Բազմաթիւ թեկնածուութիւնը

Լեւոնային Ղարաբաղի մէջ իշխող դաշինքին մաս կազմող «Արցախի ժողովրդավարական կուսակցութիւնը» ԼՂ նախագահի պաշտօնին առաջադրած է գործող նախագահ Բակո Սահակեանի թեկնածութիւնը:

Այս տարի փետրուարի 20-ին իրականացուած սահմանադրական փոփոխութիւններու հանրաքուէի արդիւնքով, մինչեւ 2020 թուականը, Ղարաբաղը պիտի կառավարուի անցումային փուլի ռեժիմով: Այդ փուլին պիտի պաշտօնավարէ խորհրդարանի կողմէ ընտրուած նախագահը:

Մօտ երեք շաբաթէն ԼՂ խորհրդարանը պիտի ընտրէ անցումային շրջանի նախագահ: Սահակեան առաջմ նախագահի միակ թեկնածուն է:

Երեք տարի տեւող անցումային փուլի ընթացքին Ղարաբաղի մէջ կառավարման համակարգ պիտի փոխուի, պիտի կարգաւորուի նոր իրաւական դաշտ:

«Ազատութեան» հետ զրոյցի ժամանակ ԱԺԿ խորհրդարանական խմբակցութեան ղեկավար Վարդգէս Բաղդեան ըսած է. «Այսօր տեղի է ունեցել ԱԺԿ 5-րդ համագումարը, որի ընթացքում կայացուել է որոշում՝ յառաջիկայ նախագահական ընտրութիւններում առաջադրել գործող նախագահ Բակո Սահակեանի թեկնածութիւնը»:

Ղարաբաղի խորհրդարանի ընդդիմադիր «Վերածնունդ» խմբակցութեան ղեկավար Հայկ Խանումեանի պնդմամբ, կատարուած սահմանադրական փոփոխութիւնները ի սկզբանէ Բակո Սահակեանի ղեկավարման ժամկէտը երկարաձգելու նպատակ ունէին:

ՄԱՍԻՍ ԱՄԵՆԱԿԱՍԱՐԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

ԼՈՒՐԵՐ

Առանց ԼՂ-ի Մասնակցութեան Որեւէ Պայմանագիր Չի Ստորագրուիր

ՀՀ Արտաքին գործոց նախարար Էտուարտ Նալպանտեան Ազգային ժողովին ներս մասնակցած է 2016 թուականի պիւտձէի կատարողականի քննարկումներուն:

Ան այս առթիւ յայտարարած է որ, հնարաւոր է, Յուլիսին տեղի ունենայ Հայաստանի եւ Ատրպէյճանի արտաքին գործոց նախարարներու հանդիպում:

«Մառուկեան» խմբակցութենէն Արարատ Զուրապեանը արտաքին գործոց նախարարին հարց ուղղած է՝ արդեօ՞ք ջանքեր կը գործադրուին՝ Ղարաբաղը դարձեալ բանակցային կողմ դարձնելու համար:



ՀՀ Արտաքին գործոց նախարար Էտուարտ Նալպանտեան

ներկայացուցչութիւնները: Ի պատասխան, Էտուարտ Նալպանտեանը վստահեցուցած է, որ դեսպանութիւններն ու Հայաստանի ներկայացուցչիչները արդիւնաւէտ կը գործեն:

«Ապրիլեան դէպքերից յետոյ ինչ եղել է, դուք կարծում էք՝ օդից է եղել: Որ Վիեննայի եւ Սանկթֆեթերպոլիի գազաթնափողովների ժամանակ այն որոշումները, որոնք ընդունուեցին, դրանք լրիւ համահունչ էին Հայաստանի Հանրապետութեան նախագահի ասածին մինչ այդ որոշումների ընդունումը, կարծում էք դա օդից է լինում: Ոչ, դա համապատասխան աշխատանքի արդիւնք է», - ըսած է Էտուարտ Նալպանտեանը:

«Սա յստակ ֆիքսուած է, առանց դրա որեւէ պայմանագիր չի կնքուի, անհնար է առանց Ղարաբաղի որեւէ համաձայնութեան գալ», - ըսած է Նալպանտեան, աւելցնելով, որ Վիեննայի մէջ պահուող՝ դեռեւս գաղտնի համարուող այդ փաստաթուղթերը օր մը կը հրատարակուին:

«Մառուկեան» խմբակցութեան քարտուղար Վահէ Էնֆիւսեանն ալ հետեւեալ հարցը ուղղած է արտաքին գործոց նախարարին՝ յատկապէս ապրիլեան իրադարձութիւններէն ետք, որ քանո՞վ արդիւնաւէտ աշխատած են տարբեր երկիրներու եւ միջազգային կառույցներու մէջ Հայաստանի շուրջ 6 տասնեակ

Վիզէն Սարգսեան. Պատերազմի Պարագային Ատրպէյճան Անուղղելի Հարուած կը Ստանայ

Հայաստանի պատերազմի պարագային ատրպէյճանական պետականութիւնը անուղղելի հարուած կը ստանայ, յայտարարած է Հայաստանի պաշտպանութեան նախարար Վիզէն Սարգսեան: Ան աւելցուցած է, որ այդ պատճառով գրեթէ վստահ է՝ լայնածաւալ ռազմական գործողութիւններու վերսկսումը անհնար է:



Հայաստանի պաշտպանութեան նախարար Վիզէն Սարգսեան

«Ես գրեթէ համոզուած եմ, որ լայնամասշտապ պատերազմ պէտք է չսկսուի պարզ պատճառով՝ որովհետեւ այդ պատերազմով Ղարաբաղի հարցը չի կարող լուծուել: Չկայ այնպիսի գարգացում պատերազմական գործողութիւնների, որով Ղարաբաղի հարցը կարող է լուծուել Ատրպէյճանի համար օգուտով, եւ ընդհակառակը՝ կայ շատ մեծ ռիսք, որ լայնամասշտապ պատերազմի պարագայում Ատրպէյճանը կարող է ստանալ անուղղելի վնաս՝ ե՛ւ իր տնտեսութեան, ե՛ւ պետութեան համար», - յայտարարած է Վիզէն Սարգսեանը եւ շարունակած. - «Ի դէպ, ես չեմ նուազեցնում այն վտանգները, որ լայնամասշտապ պատերազմը կարող է ունենալ Հայաստանի համար: Բացարձակ մէկը միւսին չի բացառում: Բայց մտածուած գնալ լայնամասշտապ պատերազմի՝ այս իրավիճակում անմտութիւն կը լինէր Ատրպէյճանի ղեկավարութեան կողմից»:

Սարգսեանի խօսքով՝ նշուածը, սակայն, չի բացառեր, որ Ատրպէյճանի իշխանութիւնները պիտի շարունակեն տարբեր սադրանքներու դիմել սահմանին: Մօտ

տաս օր առաջ ատրպէյճանական կողմի յարձակման հետեւանքով հայկական Զինուած ուժերը 4 գոհ ունեցան:

«Վերջին տաս օրուայ ընթացքում, արդէն հաստատուած տուեաններով մեր կողմից, ատրպէյճանական կողմը ունի առնուազն հաստատուած 8 գոհ, չհաստատուած թիւը շատ աւելի մեծ է, այսինքն, չհաստատուած ասելով՝ երբ մենք գիտենք, որ պատժիչ գործողութիւնը կատարուել է, կատարուել է արդիւնաւէտ, ունենք դիտարկման արդիւնք, բայց չունենք համապատասխան ապացոյցներ: Այդ 8 գոհից դեռեւս ոչ մէկը չուղարկուած չի մեր տուեաններով, ատրպէյճանական մամուլում որեւէ լուր այդ 8 գոհի մասին մինչ օրս չկայ», - ըսած է Հայաստանի ռազմական գերատեսչութեան ղեկավարը:

Փարիզի մէջ 43-ամեայ Հայր Սեբէնայով Փորձած է Մխրճուիլ Սգկիթի Մերձակայքը Հաւաքուած Բազմութեան մէջ

Ֆրանսայի մէջ ահաբեկչական գործողութիւն կատարելու կասկածանքով ձերբակալուածը ծագումով հայ է: Այդ մասին կը հաղորդէ BBC-ն: 29 Յունիսի երեկոյեան Փարիզի մերձակայքը գտնուող Կրետէյ քաղաքին մէջ, ոստիկանութիւնը ձերբակալած է 43-ամեայ տղամարդ մը, որ կը փորձէր վրաերթի ենթարկել մզկիթի մօտ կանգնած խումբ մը մարդոց: Դէպքէն տուժածներ չկան:

BBC-ն կը նշէ, որ ձերբակալուածի գործողութեան շարժառիթները յայտնի չեն, սակայն «Le Parisien» թերթը կը յայտնէ, որ ան հայ է եւ ըսած է, որ ուզած է վրէժ լուծել Փարիզի մէջ իսլամներու իրականացուցած յարձակումներուն համար:

Թերթը նշած է, որ ձերբակալուածը ալքոլի կամ թմրամիջոցներու ազդեցութեան տակ չէ եղած:

Ռուսաստանի Մէջ Եօթը Հայ Զրահեղձ Եղած Է, Որոնցմէ Չորսը Երեխայ

Յուլիս 3-ին Ռուսաստանի Զելիապինսկի մարզի Մաքսիմքա լիճին մէջ ջրահեղձ եղած է 7 հոգի, որոնց 4 երեխայ, բոլորը՝ հայ համայնքի ներկայացուցիչներ, կը գրէ մամուլը: Նաւակը դարձած է, նաւակին մէջ գտնուող մարդիկ անոր տակ յայտնուած են:

Շուրջ երեք տասնեակ հայեր հաւաքուած էին լիճի ափին ուրախ առիթով՝ հաւաքուածներէն մէկու դուստրը աւարտած էր դպրոցը ոսկէ մետալով:

Կատարուածի մասին որոշ մանրամասներ յայտնած է Զեսմենքի շրջանի վարչակազմի ղեկավարի մամուլ քարտուղար Եուլիա Վոսկրեսենցովան: Ըստ որուն, նաւակին մէջ մէկ կամ երկու տղամարդ կար, չորս կին եւ չորս երեխայ, կիները փրկուած են, երեխաները բոլորը մահացած են, ինչպէս նաեւ մահացած են նաւակի սեփականատէրն ու օգնութեան հաս

ած երկու տղամարդիկ: «Նաւակը պարզապէս ծանրաբեռնուած էր չափէն աւելի», - ըսած է Վոսկրեսենցովան եւ աւելցուցած, որ լիճին մէջ արգիլուած էր լողալ եւ մոթորանաւակով գրօսնել: Բացի այդ, նախնական տուեաններով, տղամարդը, որ նաւը կը վարէր, մինչ այդ ալքոլ գործածած էր:

Չհոհուած երեխաներն են՝ 10 տարեկան աղջիկ, երկու 8 եւ մէկ 15 տարեկան տղաներ, անոնցմէ ոչ մէկը փրկարար բաճկոն ունէր, կը փաստեն Քննչական կոմիտէի տարածաշրջանային վարչութեանէն:

Չհոհուածները տեղացի գործարարներ են, որոնք Ռուսաստան եկած էին քանի մը տարի առաջ, եւ անոնց երեխաները:

Զելիապինսկի մարզի նահանգապետ Պորիս Տուպրովսկին յայտարարած է, որ գոհուածներու ընտանիքները պիտի ստանան 100 հազար ռուբլի օգնութիւն:

Ընտրակաշառքը Գլխաւոր Դերակատար

Շարունակուած է 1-էն նասիրութիւնն ու տեղամասերու մէջ երիտասարդ ստուգողական համակարգերու իրականացուցած դիտարկումները: Անդրադառնալով արդիւնքներուն՝ պարոն Հոկտանեան ըսաւ. «Խիստունները ամենատարածուածն ընտրակաշառքի դէպքերն են՝ 90 դէպք, որից 53-ը տեղական մոնիթորներն են յայտնաբերել, մնացածը ստացուել է ՁԼՄ-ներից: 59 դէպք ենք ունեցել, երբ շտապներում տեսել ենք, որ աշխատանքային ժամին են քարոզչութեամբ զբաղուած: 38 դէպք ենք արձանագրել, երբ պետական կամ համայնքային մարմինների կողմից ասֆալթապատման եւ այլ բարեկարգման դէպքեր են եղել: Անձնագրերի հաւաքագրման 14, ընտրողների ցուցակագրման 11 դէպք է գրանցուել»:

Ըստ Հոկտանեանի, յետխորհրդային երկիրներէն միայն Հայաստանի եւ Ղրղզստանի մէջ է, որ ճնշումները ոչ թէ ընդդիմադիր կուսակցութիւններու գործիչներու նկատմամբ են, այլ աւելի շատ քաղաքացիներուն, յատկապէս պետական համակարգի մէջ աշխատողներուն, եւ այս առումով ալ վարչական ներուժի չարաշահումը իւրօրինակ կը դառնայ:

Անդրադառնալով վարչական ներուժի չարաշահման տեսակներուն՝ պարոն Հոկտանեան ըսաւ է, որ պետական պաշտօնեաներու աշխատաժամանակը լրջագոյն վարչական ներուժ է. «Որքան էլ ԿԼՅ-ն հակառակը պնդի, բայց, միեւնոյնն է, աշխատանքի ժամին քարոզչութիւն անելը հենց վարչական ռեսուրսի չարաշահում է համարուում»:

Վարուժան Հոկտանեանի կարծիքով վարչական միջոցներու չարաշահման ամար կանխարգելիչ քայլ կրնայ ըլլալ ընդդիմադիր կուսակցութիւններու հզօրացումը:

Հայաստանէն Արտագաղթածներու Սեփական Հողերը Հարկադիր կը Վաճառուին

«Փաստ» օրաթերթը կը գրէ, որ՝ հակառակ անոր, որ ԱԺ ճրգ գումարման խորհրդարանի մեկնարկի ելոյթին Սերժ Սարգսեանը, անդրադառնալով արտագաղթի խնդիրին, յայտարարեց, որ «յառաջիկայ տասնամեակներու համար մեր գերխնդիրը պէտք է լինի... արտագաղթածներու վերադարձի նախապայմաններու ստեղծումը», կառավարութիւնը որոշած է դիւրացնել Հայաստանէն արտագաղթածներէն սեփական հողերը վերցնելու գործընթացը: Խօսքը այն անձերուն մասին է, որոնք հրաժարած են ՀՀ քաղաքացիութենէն:



ՀՀ Գիւղնախարար Իգնատի Առաքելեան

կամ տալ վարձակալութեան: Ձեռք կարող այլեւս անուշադրութեան մատնել այդ հարցը, պէտք է անպայման անդրադառնանք, եւ եթէ պէտք է օրէնք փոփոխել, պէտք է փոփոխենք եւ միջոցներ ձեռնարկենք», - ըսած է նախարարը:

Գիւղերուն մէջ տարուէ տարու կ'աւելնան չմշակուող հողատարածքները, նոյնիսկ ջրովի ու բարձր բերքատուութիւն ապահովող վայրերուն մէջ: Հողատէրերէն շատեր արտագաղթած են: Անոնց մէկ զգալի մասը այլ երկիրներու քաղաքացիութիւն ստացած է՝ պահպանելով հողատարածքներու նկատմամբ սեփականութեան իրաւունքը:

Գիւղնախարարի հետ հանդիպման չմշակուող հողերու հարցը բարձրացուցած է Ազատանի գիւղացեալ Վարդան Իկիրիկեանը: Միայն Ազատան համայնքի մէջ արդէն 200 հեքթար չմշակուող հողատարածք կայ, որ վարձակալութեան ենթակայ է: Գիւղացեալը առաջարկած է գիւղացեալներին լիազօրութիւն տալ՝ ժամանակաւոր տնօրինել այդ տարածքները, որպէսզի անոնք մշակուին ու եկամտաներ ապահովեն համայնքներուն համար:

Արտագաղթի պատճառով գիւղերուն մէջ խնդիրներու առաջ կանգնած են մարզի գրեթէ բոլոր համայնքները: Օրէնքը նման պարագաներուն միայն մէկ լուծում կը նախատեսէ, որ, սակայն, գիւղացեալները չեն կիրառեր՝ չուզելով «վատամարդ դառնալ» ու փչացնել յարաբերութիւնները համայնքի բնակիչներուն հետ:

«Ճիշդ է՝ Հողային օրէնագրքի 102-րդ յօդուածը նախատեսում է, որ հողերի ոչ նպատակային օգտագործելու դէպքում դրանք օտարման ենթակայ են, բայց մեր գործընկերներից ոչ ոք չի գնայ այդ քայլին, որովհետեւ ոչ մէկի սերնդին չենք գրկելու հողի սեփականութիւնից», - ըսած է Ազատանի գիւղացեալը:

Մերքելի Կուսակցութիւնը Դեմ է

Շարունակուած էջ 1-էն

«Մենք կողմ ենք ԵՄ-Թուրքիա յարաբերութիւններու խորացման, երկու կողմի համար: Սակայն կը մերժենք Թուրքիոյ լիիրաւ անդամակցութիւնը, քանի որ Թուրքիան չի կատարեր իր ստանձնած պարտաւորութիւնները: Խորապէս մտահոգուած ենք Թուրքիոյ մէջ իրաւական պետութեան, մասնաւորապէս խօսքի ու մամուլի ազատութեան հարցերուն մէջ տեղի ունեցած վերջին զարգացումներու առնչութեամբ», - ըսուած է նախընտրական ծրագրին մէջ:

Պաշտօնական Անգարան առայժմ չէ արձագանգած վարչապետ Մերքելի ղեկավարած դաշինքի արտայայտած դիրքորոշման:

Մինչ այդ Թուրք-գերմանական յարաբերութիւններուն մէջ կրկին լարուածութիւն կը նկատուի Գերմանիոյ Համպուրկ քաղաքին մէջ 7-8 Յուլիսին կայանալիք G20-ի գագաթանժողովէն առաջ, որուն պիտի մասնակցի նաեւ Թուրքիոյ նախագահ Թայիփ Էրտողանը:

Գերմանական իշխանութիւնները թրջական կողմին զգուշացուցած են, որ նախագահ էրտողանը չի կրնար ելոյթ ունենալ թրջական

Քննարկուած են Հիւսիսաթլանթեան Դաշինքի Հետ Հայաստանի Հանրապետութեան Համագործակցութեան Ծրագիրները



29 Յունիսին Հայաստանի Հանրապետութեան պաշտպանութեան նախարար Վիգէն Սարգսեանի գլխաւորած պատուիրակութիւնը Պրիւքսէլի մէջ մասնակցած է ԱՖրանստանի մէջ ՆԱԹՕ-ի ղեկավարած «Վճռական աջակցութիւն» գործողութեան մասնակցի պետութիւններու պաշտպանութեան նախարարներու նիստին:

Նիստի ընթացքին ՀՀ պաշտպանութեան նախարարը հանդէս եկած է ելոյթով՝ իր գործընկերներուն ներկայացնելով ԱՖրանստանի մէջ, եւ ընդհանրապէս լայն տարածաշրջանին մէջ անվտանգութեան ու կայունութեան ապահովման Հայաստանի Հանրապետութեան մօտեցումներն ու տեսլականը, ինչպէս նաեւ առաջարկած է որոշակի լուծումներ՝ առկայ խնդիրներուն պաշտպանական բաղադրիչի ծիրէն ներս: Նիստի հիմնական արդիւնքները լրատուամիջոցներուն ներկայացուցած է ՆԱԹՕ-ի գլխաւոր քարտուղար Հանս Սթոլթենբերգը:

Նիստի աւարտէն ետք ՆԱԹՕ-ի գլխաւոր քարտուղարի տեղակալ Ռոզ Կոթմիրոլլըրի հետ երկկողմ հանդիպման ընթացքին քննարկուած են Հիւսիսաթլանթեան դաշինքի հետ Հայաստանի Հանրապետութեան համագործակցութեան ընթացքն ու ապագայ ծրագրերը: Անդրադարձ կատարուած է նաեւ ընդհանուր ու տարածաշրջանային անվտանգութեան խնդիրներուն, ներ-

կայացուած է Հայաստանի մէջ ընթացող պաշտպանական բարեփոխումներու շրջանակը, տեսակէտներ փոխանակուած են անոնց իրականացման գործին մէջ ՆԱԹՕ-ի օժանդակութեան հնարաւորութիւններու ու ձեւաչափի վերաբերեալ:

Պրիւքսէլ կատարած այցի ծիրէն ներս ՀՀ պաշտպանութեան նախարարը հանդիպած է նաեւ Եւրոպական Միութեան ռազմական կոմիտէի նախագահ, բանակի զօրավար Միխաիլ Գոսթարաքոսի հետ: Հանդիպման ընթացքին քննարկուած են Հայաստանի Հանրապետութեան եւ Եւրոպական Միութեան ռազմական օղակներու միջեւ համագործակցութեան հաստատման հնարաւորութիւնն ու հեռանկարները:

Քաղաքացիական հասարակութեան հետ համագործակցութեան ծիրէն ներս ՀՀ պաշտպանութեան նախարար Վիգէն Սարգսեանը Քարնեկի հիմնադրամի եւրոպական մասնաճիւղին մէջ հանդիպում ունեցած է շարք մը միջազգային հետազօտական կեդրոններու փորձագիտական անձնակազմի հետ: Քննարկուած են տարածաշրջանային անվտանգութեան առնչուող հարցեր:

ՀՀ պաշտպանութեան նախարարը պատասխանած է փորձագէտներու հնչեցուցած հարցերուն, ինչպէս նաեւ ծանօթացած անոնց կողմէ իրականացուած վերջին հետազօտութիւններու ու վերլուծութիւններու արդիւնքներուն:

36 Գոնկրեսականներ կը Պահանջեն

Շարունակուած էջ 1-էն

րիկեան գիւղնախարարական անվտանգութեան աշխատակիցներուն, որու հետեւանքով վերջիններուս լուրջ վնասուածքներ հասած էին:

«Այլեւս չենք կրնար թոյլ տալ, որ Թուրքիան վարկաբեկէ մեր ժողովրդավարական արժէքները: Կը յորդորենք ձեզ դէմ արտայայտուիլ այս առաջարկուած վաճառքին», - նամակին մէջ յայ-

տարարած էն գոնկրեսականները:

«Շնորհակալ ենք գոնկրեսական Թրոթին եւ անոր գործընկերներուն այս նախաձեռնութեան եւ ամբրիկեան արժէքներու համար պայքարելու համար, հաշուի առնելով այսպիսի բացայայտ անյարգալից վերաբերմունքը մեր նուիրական իրաւունքներու նկատմամբ», - այս առթիւ յայտարարած է Համագումարի գործադիր տնօրէն Պրայլն Արտունին:

հիւպատոսարանին մէջ: Գերմանիոյ մէջ սպասուող խորհրդարանական ընտրութիւններէն առաջ արգիւտուած են ԵՄ անդամ եւ այլ երկիրներու առաջնորդներու ելոյթները: Մինչդեռ Պերլինի մէջ Թուրքիոյ ղեկավարութեան մամուլի խօսնակ Ռեֆիկ Սողուկոլլուն աւելի վաղ գերմանական թերթերէն մէկուն յայտնած էր, թէ հիւպատոսարանին մէջ Թուրքիոյ նախագահի ելոյթի համար իրենք դաշնային կառավարութեան թոյլատուութեան կարիքը չունին:

Թուրքիոյ կառավարութեան

խօսնակ Նուսան Քուրթումուն յալ, անդրադառնալով Թուրք-գերմանական յարաբերութիւններուն մէջ առկայ խնդիրներուն, նշած է, թէ անոնք կապուած են Գերմանիոյ ներքաղաքական զարգացումներուն հետ. - «Այս լարուածութիւնը արհեստածին է, որ ստեղծուած է գերմանացի որոշ քաղաքական գործիչներու կողմէ՝ ելլելով ներքաղաքական շահերէ: Թուրքիոյ ու Գերմանիոյ յարաբերութիւնները չեն կրնար թունաւորուիլ ոմանց ձեռքով»:

Գերմանիա Արգիլած է Էրտողանի Զանրահաւաքը Տեղացի Թուրքերու Զեռ

Գերմանիոյ ներքին գործերու նախարար Թոմաս տը Մեցիերէն բացարձակ ճշմարիտ համարած է այն որոշումը, որով կ'արգիլուի Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայի Էրտողանին ելոյթ ունենալ գերմանաբնակ թուրքերու առջեւ: Ինչպէս կը հաղորդէ «Արմէնքրես»-ը, այս մասին յայտնած է գերմանական «Deutsche Welle»-ն:



Ինդրանքով: Այս մասին յայտնած էր Գերմանիոյ արտաքին գործոց նախարար Զիլմար Կայպրիշը՝ նշելով, սակայն, որ Թուրք-գերմանական լարուած յարաբերութիւններու պարագային այդ հանդիպումը նպատակալարմար չէ:

Իսկ գերմանական տարբեր քաղաքներ մերժած էին ելոյթի համար սրահ տրամադրել Թուրքիոյ նախագահին:

«Գերմանիոյ մէջ նախապատրաստուող ընտրական պայքարէն առաջ դուրսէն ազդելու փորձերը բացարձակապէս անընդունելի են», - ըսած է նախարարը: Ան նշած է, որ թէպէտ Թուրքիան Գերմանիոյ համար կարեւոր գործընկեր է, սակայն վերջին շրջանին Թուրք-գերմանական յարաբերութիւնները այդքան ալ լաւ վիճակի մէջ չեն:

Էրտողանը կը նախատեսէ 7-8 Յուլիսին մասնակցելի գերմանական Համալուրկ քաղաքին մէջ կազմակերպուելիք G-20 երկիրներու գագաթնաժողովին: Ան պաշտօնապէս դիմած է տեղի իշխանութիւններուն միջոցառում կազմակերպելու եւ այդտեղ ելոյթ ունենալու:

Ատրպէյճանը 350 Դիւանագիտական Թռիչք Իրականացուցած է՝ Ահաբեկիչները Զինելու Զամար



Պուլկարիոյ ամենամեծ տպաքանակով օրաթերթը համարուող «Տրուտ» պարբերականի կայքին մէջ 2 Յուլիսին հրատարակուած է գալթակղեցուցիչ հետաքննութիւն մը, որ խօսուել փաստերու եւ գաղտնագերծուած փաստաթուղթերու հիման վրայ կը բացայայտէ ատրպէյճանական պետական օդակներու ուղղակի ներգրաւուածութիւնը աշխարհի տարբեր ծայրերուն մէջ գործող իսլամական ահաբեկչական խումբերու գինման գործին մէջ:

Գէնք եւ գինամթերք ուղարկելու համար: Այդ գինատեսակներու մեծ մասը օգտագործուած է ահաբեկչական կազմակերպութիւններու կողմէ:

Ինչպէս կը հաղորդէ «Արմէնքրես»-ը, թերթի յօդուածագիր Տիլեանա Կայտանճիեւայի հետաքննական նիւթին մէջ անդրադարձ կատարուած է հիմնական Ատրպէյճանի Silk Way Airlines պետական ընկերութեան կողմէ դիւանագիտական բեռերու անուան տակ բողբոջմամբ Սուրիա, Իրաք, Աֆղանստան, Փաքիստան եւ Քոնկո գէնքի անօրինական եւ լայնամաշտապ արտահանմանն ու վաճառքին:

Յօդուածագիրը նշած է նաեւ, որ Ատրպէյճանի տեղափոխած գէնքի մէկ մասը կրնայ օգտագործուած ըլլալ Լեռնային Ղարաբաղի մէջ: Խօսուել փաստերով ապացուցուած է, որ 2016-ին, Ատրպէյճանի պաշտպանութեան նախարարութեան յայտարարութիւնը այն մասին, իբր հայկական կողմը սպիտակ ֆոսֆոր օգտագործած է, ոչ այլ ինչ է, քան կեղծիք: Ատրպէյճանէն գինուորականներու՝ իբր գտած նուակը ամենայն հաւանականութեամբ, եղած է անօրինականօրէն տեղափոխուող գէնքերու խմբաքանակէն: Օգտագործելով Ատրպէյճանի պաշտպանութեան նախարարութեան հասցէն պետական ընկերութիւնը իրականացուցած է անօրինական գործունէութիւն, ինչը անհնար էր առանց Պաքուի բարձրագոյն իշխանութեան թոյլտուութեան ու գիտութեան: Արտահոսքի արդիւնքով հասանելի դարձած փաստաթուղթերը կը վկայեն, որ Ատրպէյճանը նմանօրինակ գործելած որդեգրած է ոչ միայն Պուլկարիոյ, այլեւ շարք մը երկիրներու պարագային, որոնց մօտ գործող դեսպանատուները Ատրպէյճանի արտաքին գործոց նախարարութեան համապատասխան կարգադրութիւններ ստացած են:

Յօդուածը հրատարակուած է, երբ պուլկարացի ցանցահէններու Anonymus Bulgaria խումբը կոտորած է Սոֆիայի մէջ Ատրպէյճանի դեսպանատան ցանցն ու փաստաթուղթերը դարձուցած է հասանելի: Յօդուածագիրը նշած է, որ վերջին երեք տարիներու ընթացքին ատրպէյճանական ընկերութիւնը քողարկուած է դիւանագիտական ծիսածակոյթով աշխարհի տարբեր թէ՛ կէտեր տասնեակ թոններով

տարածքներու համար արեւելի կայաններու տեղադրման շարք մը նախագիծեր:

Նշենք, որ 23 Փետրուար 2017-ի նիստին կառավարութիւնը որոշած էր ներդրումային ծրագրի

ծիրէն ներս «Պրոֆպանել» ՍՊԸ-ին ազատել մաքսատուրքէ՝ արհեստագործական սարքաւորումներու, անոնց բաղկացուցիչ ու համալրող մասերու, հումքի եւ նիւթերու ներմուծման համար:

Հայաստանի Մէջ Առաջին Արեւային Վահանակներ Արտադրող Գործարանի Պաշտօնական Բացումը

Վարչապետ Կարէն Կարապետեան ներկայ գտնուած է «Պրոֆպանել» ընկերութեան՝ Հայաստանի մէջ առաջին արեւային վահանակներ արտադրող գործարանի պաշտօնական բացման արարողութեան: Ընկերութիւնը Հայաստանի մէջ արեւային վահանակներու արտադրութեան ոլորտին մէջ գործունէութիւն ծաւալած է 2016 թուականէն SolarOn պարանքանիշով: Այս մասին յայտնած են ՀՀ կառավարութեան լրատուական ծառայութեան:



տոլար: Ընկերութիւնը կը նախատեսէ նախ արեւային վահանակներ մատակարարել ներքին շուկային, ապա կազմակերպել արտահանում դէպի տարածաշրջանային եւ այլ երկիրներ: 1,5 քիլո ուաթ հզօրութեամբ արեւային փոքր-կայանը, որ կրնայ արտադրել ամսական մօտ 200 քիլո ուաթ ելեկտրական ուժանիւթ, կ'արժէ 1,5-1,7 հազ. ԱՄՆ տոլար: 2017ի գարունէն ընկերութիւնը կ'աշխատի յատուկ ռեժիմով եւ արդէն իրականացուցած է արտադրական եւ բնակելի

Վարչապետ Կարապետեանը շրջայց կատարած է գործարանին մէջ, ծանօթացած արտադրական գործընթացին, ընկերութեան ծրագիրներուն եւ գարգացման հեռանկարներուն: Կառավարութեան ղեկավարին ներկայացուած է, որ SolarOn արեւային վահանակներ արտադրող եւ տեղադրող գործարանի արտադրական հզօրութիւնը կը կազմէ տարեկան 10 Միլի ուաթ, աշխատակիցներու քանակը լրիւ արտադրական ծանրաբեռնուածութեան պարագային՝ 50 մարդ: Սկզբնական ներդրումներու ծաւալը կը կազմէ մօտ 2 միլիոն ԱՄՆ

Bedros S. Maronian 818/500-9585

Siamanto B. Maronian 818/269-0909

SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs

| | | |
|---|---|--|
| 6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048 | 805 East Broadway Glendale, CA 91205 | 300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101 |
|---|---|--|

- Life Insurance
- Health Insurance
- Group & Individual
- Long Term Care
- Disability
- Estate Planning
- Will & Living Trust
- Full Annual Review
- Mortgage Protection
- College Planning
- Workman's Compensation
- Employee Benefits
- Annuity
- IRA
- 401K & 403B

NEW YORK LIFE **Anthem** **BlueShield** **Aetna** **Health Net** **CIGNA** **KAISER PERMANENTE**

Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

A.B.A. INSURANCE SERVICES

Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Աճիրաժողտ է

Coverage & Protection should be on the top of your priority list.

ԵՐԳԻ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ՎԱՍՏԱԿԱԽՈՐ ԳՈՐԾԻՉ՝ ԶԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆԻ ԾՆՆՂԵԱՆ 80-ԱՄԵԱԿԸ



ԽԱՉԻԿ ՃԱՆՈՅԵԱՆ

Կիրակի, Յունիս 25, 2017, երեկոյեան ժամը 6-ին, Կլենտոնի John Wayne հանդիսասրահին մէջ, մեծաշուք ձեռնարկով մը եւ հոծ բազմութեան ներկայութեամբ, Լոս Անճելոսի հայութիւնը մեծագոյն սիրով նշեց հայ երգի եւ երաժշտութեան մեծանուն գործիչ, 200-է աւելի երգերու եւ երաժշտական կտորներու հեղինակ, խմբավար, «Սիփան» երգչախումբի հիմնադիր և 38 տարիներու ղեկավար՝ **Հենրիկ Անասեանի** ծննդեան 80 եւ հայ երգի ու երաժշտութեան վաստակի 60 ամեակները:

Բազմատաղանդ այս արուեստագէտը, հայ երգի եւ երաժշտութեան աստուածատուր շնորհքն զատ, գրական բացառիկ շնորհներով օժտուած գրող է, հրապարակագիր է, գիրքերու հեղինակ է եւ Գալիֆորնիոյ Հայ Գրողներու Միութեան արժանընտիր նախագահն է: Այդ երեկոյ ներկայներ եկած էին մեծարելու միայն հայ երգի եւ երաժշտութեան անխոնջ գործիչը, իսկ մենք, վատահենք, որ ապագային նման ձեռնարկով մը եւս պիտի գնահատուի նաեւ **Հենրիկ Անասեան** շնորհալի գրողը:

Հենրիկ Անասեան ոչ միայն պաշտելու աստիճան կը սիրէ եւ կապուած է հայ երգին եւ երաժշտութեան, այլ նաեւ միջազգային երգին ու երաժշտութեան խորիմաց արուեստագէտ մըն է, միջազգային երգին ու երաժշտութեան ովկիանոսի մէջ լողացող կէտ ձուկ մըն է: Այնուհանդերձ, մեր մեծարեալը հաւատարիմ մնաց իր «Փոքր Ածուկ» երգին և երաժշտութեան և 60 տարի շարունակ ծառայեց մեր ժողովուրդի արուեստին:

Ձեռնարկը իրենց ներկայութեամբ կը պատուէին Հ.Հ. Լոս Անճելոսի Գլխաւոր Հիւպատոսի տեղակալ՝ Վալերի Մկրտումեան, որուն հովանաւորութիւնը կը վայելէր այս ձեռնարկը, Կլենտոնի Քաղաքապետական Խորհուրդի անդամ՝ Վրէժ Աղաջանեան, հոգեւոր հայրեր, կուսակցական, մշակութային և հասարակական միաւորներու ներկայացուցիչներ, մամուլի եւ հեռատեսիլի աշխատակիցներ:

Փառք ու հազար պատիւ մեր ժողովուրդին, որ այդ օր հակառակ տեղի ունեցած խաչածեղ բազմաթիւ ձեռնարկներու, հոծ բազմութեամբ ներկայ եղաւ Յոբելեանական այս հանդիսութեան եւ երկա-

րատել ու ջերմ ծափահարութիւններով և «պրաւօ»ներով շնորհակալութիւն յայտնեց եւ գնահատեց հայ ժողովուրդի երգարուեստի ամբողջանուէր սպասարկուներ՝ **Հենրիկ Անասեանին**, անոր տիկնոջ, սքանչելի երգչուհի Մարիետային, հոյակապ զաւակներուն՝ երգիչ Արամին եւ երաժշտական խումբի ղեկավար Արմէն Անասեանին, մանաւանդ «Սիփան» երգչախումբի հին եւ նոր բոլոր անդամներուն, անոնց ընկերակցող հրաշալի սիմֆոնիկ նուագախումբի արհեստավարժ անդամներուն:

Այդ օր, **Հենրիկ Անասեանին** երգով եւ նուագով շնորհաւորելու եկած էին գաղութի սիրուած եւ յարգուած անուանի երգիչ-երգչուհիներ՝ Մարալ Բարսեղեան, Անահիտ Ներսիսեան, Անահիտ Մանուկեան, Սալբի Մալիքեան, Պային Ռոզուսեան, դուդուկի մեծ վարպետ Ռուբէն Յարութիւնեան, Յարութ Ֆորուլեան՝ հանդիսավարութեամբ, որոնք **Հենրիկ Անասեանի** երգերը եւ նուագները կատարելով արժանացան ժողովուրդի յորժնկայս երկարատեւ ծափահարութիւններու:

Կազմակերպիչ յանձնախումբի անունով բարի գալուստի եւ բազմաջերմ խօսք կատարեց ծանօթ հասարակական գործիչ՝ Յակոբ Յովհաննէսեան: Ան **Հենրիկ Անասեանի** բազմերես ծառայութիւնը ներկայացնելէ ետք՝ ամբիոն հրաւիրեց Հ.Հ. Գլխաւոր Հիւպատոսի տեղակալ՝ Վալերի Մկրտումեանը:

Հայաստանի պետական ներկայացուցիչը շատ գեղեցիկ ձեւով ներկայացուց Անասեանի 60 տարիներու երկար վաստակը, ապա Գլխաւոր Հիւպատոսութեան կողմէ գնահատագիր մը յանձնեց մեծարեալին: Նմանապէս, Կլենտոնի քաղաքապետ՝ Վարդան Կարպետեանի գնահատագիրը կարգաց Քաղաքապետական Խորհուրդի նորընտիր անդամ՝ Վրէժ Աղաջանեան: Գնահատագրեր ղրկած էին Լոս Անճելոսի Քաղաքապետական Խորհուրդի անդամ Փօլ Գրիգորեան եւ հայասէր գոնկրեսական Ատամ Շիֆ: Շնորհաւորական նամակներ ղրկած էին շրջանիս հոգեւոր պետերը, մշակութային եւ հայրենակցական միութիւնները, գործարարներ եւ **Հենրիկ Անասեանին** մօտէն ծանօթ ընկերներ:

Յակոբ Յովհաննէսեան սիրով հրաւիրեց ծանօթ ասմունքող՝ Յարութիւն Ֆորուլեանը, ձեռնարկը

վարելու համար: Այդ օրուան յայտագիրը ամբողջութեամբ **Հենրիկ Անասեանի** տեղեկագործութիւնները կը ներկայացնէր: Այդ գիշեր ելոյթներ ունեցան շատ շնորհալի երգիչ-երգչուհիներու հոյլ մը, ընկերակցութեամբ՝ հրաշք սիմֆոնիկ նուագախումբին:

Յայտագրին Ա. մասը ամբողջութեամբ ձեռնհասօրէն ղեկավարեց **Հենրիկ Անասեանի** որդին՝ Արմէն Անասեանը:

38 տարիներ առաջ Հոլիվուտի մէջ կեանքի կոչուեցաւ «Սիփան» երգչախումբը, նախաձեռնութեամբ եւ ղեկավարութեամբ **Հենրիկ Անասեանի**:

«Սիփան» երգչախումբի եւ սիմֆոնիկ նուագախումբի կատարումները ղեկավարեց նոյն ինքը՝

որդին, անոր 38 տարիներու անխոնջ աշխատանքին համար:

Վերջաւորութեան, երգչախումբի անդամները, բոլոր երգիչները եւ սրահը լեցնող բազմութիւնը, ընկերակցութեամբ սիմֆոնիկ նուագախումբին երգեցին «Շնորհաւոր տարեդարձ» երգը, նուիրուած օրուան մեծարեալ՝ Մախսթրօ **Հենրիկ Անասեանին**:

Այդ գիշեր Կլենտոնի John Wayne սրահը, փոքրիկ Հայաստանի վերածուած էր, այնքան հայաբոյր, հայատրոփ և հայրենասիրական անուշահամ երգ ու խօսք հնչեցին այդ սրահէն ներս, որուն համար կարելի է ըսել որ այս ձեռնարկին ներկայ շեղողները, իրապէս մեծ հաճույք մը, սիրտերն ու հոգիները լիցքաւորող հազուա-



Հենրիկ Անասեանը:

Յօրինուած չորս երգեր սքանչելիօրէն կատարեցին «Սիփան» երգչախումբի անդամները, սրահը թնդացնող ծափերու արժանանալով:

Վերջաւորութեան, յանուն «Սիփան» երգչախումբին բոլոր անդամներու վարչութեան բազմամեայ եւ խիստ համակրելի ատենապետ՝ Ռաֆֆի Թորոսեան յուշանուէրով մը անդամներուն շնորհակալութիւնը յայտնեց Մախսթ-

գիւտ վայելքէ մը զրկուեցան:

Ջերմօրէն կը շնորհաւորենք մեր սիրելի Մախսթրօ **Հենրիկ Անասեանը**, իր ծննդեան 80 եւ գործունէութեան 60 ամեակներուն առիթով:

Հենրիկ Անասեան իր կենդանութեան օրով իսկ, իր գործով և վաստակով, արդէն իսկ անմահներու շարքին անցած է: Վարձքը կատար, սիրելի Մախսթրօ: Ձեզի կը մղթենք երկար եւ կենսառողջ օրեր:

Arabian Night
Սրահային Երեկոյ

Կազմակերպութեամբ՝
ԿԼԵՆՏԵՅԻՍ Ս.Գ.Հ.Կ.
ԱՐՄԷՆ ԿԻՏՈՒՐ ՄԱՍՆԱԾԻՒՂԻՆ

Երեկոն կը խանդաւարէ՝
անձի Հայաստան ժամանելն իս-
կապես անհրաժեշտութիւն էր այդ
ժամանակ: Բունիաթեանը ճարտա-
րապետական շատ աշխատանքներ
ունի ինչպէս Հայաստանում, այնպէս
էլ Ռուսաստանում», -ասաց ճար-
տարապետութեան ազգային ինս-
տիտուտի տնօրէն Անուշ Տէր-Մի-
նասեանն ու նշեց, որ Գառնու
տաճարի վերականգնման ամենա-
յաջող ծրագիրը եւս եղել է Բուն-
իաթեանինը:
Իզաբելլան խօսեց ամուսնու՝
Արթուր Բունիաթեանի՝ իրենց
ներկայացրած պատմութիւնների
մասին: «Նիկողայոս Բունիաթեանը

Շար.ը էջ 19

ԹՈՒՐԲՈՅ ԶԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ
ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ

Մինչ պոլսահայ գաղութը
մասամբ իր հանդարտութիւնը
գտած էր՝ Թուրքիոյ Հայոց
պատրիարքի տեղապահ Գարե-
գին Արք. Պէքճեանի ընտրու-
թեամբ, անդին նոր խոչընդոտ-
ներ երեւան եկան պատրիարքի
փոխանորդ Արամ Արք. Աթէշ-
եանի կողմէ: Արդարեւ, նոր տե-
ղապահի ընտրութենէն անմի-
ջապէս ետք Արամ Արք. պէտք էր
իր հրաժարականը տար եւ հարկ
եղած ձեւական փոխանցումնե-
րը կատարէր նորընտիր տեղա-
պահին: Դժբախտաբար այս մէ-
կը տեղի չէ ունեցած հակառակ
կրօնական ժողովի որոշումին:
Արամ սրբազան կ'առարկէ
թէ տակաւին նոր տեղապահի
ընտրութիւնը չէ վաւերացուած
Պոլսոյ Կուսակալութեան կողմէ
եւ թէ ինք չի կրնար հրաժարիլ
իրերու այս կացութեան մէջ...:
Այսու հանդերձ, ընտրեալ տե-
ղապահ Գարեգին Արք. Պէքճեան,
իր նախապատրաստական աշ-
խատանքներուն սկսած է, նոր
պատրիարքի ընտրութեան հա-
մար եւ իր շուրջ համախբած է
կրօնական դասի մեծամասնու-
թիւնն ու գլխաւոր կառույցնե-
րու եւ գաղութի ազգայիններու
զօրակցութիւնը:
Կ'իմանանք թէ պաշտօնա-
գլուկ պատրիարքի փոխան-
որդ Արամ սրբազան տակաւին
իր փոխանցումները չէ կատա-
րած, որոնց մէջ կարեւորագոյնն
է դրամատնային հաշիւներու



փոխանցումը...:
Պատրիարքական ընտրու-
թեան հարցով եկեղեցական հա-
մագումարի կողմէ ընդունուե-
ցաւ բանաձեւ մը եւ ներկայաց-
ուեցաւ Սթանպուլի կուսակա-
լութեան նկատառման: Այս կա-
պակցութեամբ ժողովի ատե-
նապետ Տ. Սահակ Եպս. Մաշալ-
եան ըսաւ. «Հիմա այլեւս կը
սպասենք պետութեան արձա-
գանգին: Պատկան իշխան-
ութիւնները՝ գրութիւն մը
կրնան ուղարկել տեղապահ
սրբազան հօր եւ կամ գինք
կրնան հրաւիրել նահանգապե-
տարան»:
Միւս կողմէ շուտով պիտի
ստեղծուի 17 հոգիներէ բաղկա-
ցած ընդարձակ կազմ մը, որուն
պարտականութիւնը պիտի ըլ-
լայ նախաձեռնել նոր պատրի-
արքի ընտրութիւնը:

ՍԵԼԻՆԱ ՏՈՂԱՆ ՏԵՍԱԿՅԵՑԱՒ ՊԱՏՐԻԱՐԵԱԿԱՆ
ՏԵՂԱՊԱՇ ԳԱՐԵԳԻՆ ԱՐԷ. ՊԵՔՃԵԱՆԻ ՇԵՏ

Թուրքիոյ խորհրդարանի
հայագրի երեսփոխաններէն Սե-
լինա Տողան այցելեց Պոլսոյ Հայոց
պատրիարքարան ու տեսակցեցաւ
պատրիարքական տեղապահ
Գարեգին արք. Պէքճեանի հետ:
«Տեղապահի պաշտօնը ստանձնած
սրբազան Գարեգին արք. Պէքճեանը
շնորհակալեցի: Քննարկումներ
ունեցանք օրակարգային
գարգացումներու շուրջ: Կը ցան-
կամ, որ պատրիարքի ընտրու-
թիւնը մեր երկրին եւ համայնքին
համար բարի ըլլայ», գրեց Տողան
իր «Facebook»-ի էջին վրայ:
Նշենք, որ Պոլսոյ Հայոց
պատրիարքարանը պաշտօնական
գեկուցով մը վերահաստատեց
պատրիարքարանի եկեղեցական



խորհուրդին կողմէ Արամ արք.
Աթէշեանը պաշտօնակ ընելու լու-
րը: Աթէշեանի լիազօրութիւնները
դադրեցնելու օգտին քուէարկեցին
խորհուրդի 22 անդամներ, մինչ
երկու ուրիշներ դէմ
արտայայտուեցան:

JENNY'S IMMIGRATION & SOCIAL SERVICES
Հաստատութեան տնօրէն եւ հայ համայնքին տարիներ շարունակ օգնութիւն ցուցաբերած փորձառու ճեմի Աբրահամեանը շարունակում է օգտակար լինել մեր հայրենակիցներին կառավարութեան կողմից գաղթականութեան փաստաթղթերի, հիւանդութեան, թոշակների եւ պետական օգնութեան ձեւակերպման անհրաժեշտ ծառայութիւններով:
Քաղաքացիութեան Կեդրոն
1436 W. Glenoaks Blvd., Glendale, CA 91201
Tel: (818) 242-8196 Fax: (818) 937-9120
-Քոլոր ճանապարհներով Green Card եւ այլ գաղթականական ծառայութիւններ
-Եթէ երբեւէ ունեցել էք խնդիրներ, որը կարող է ձեզ խանգարել քաղաքացիութեան հարցով, մի մտահոգուէք, մենք ձեզ կ'օգնենք ...
Passport and Immigration Photos
Jenny Abrahamian
Թարգմանութիւններ՝ Հայերէն, Անգլերէն, Արաբերէն, Ռուսերէն, Պարսկերէն եւ այլն
-Լիազօրագրեր/ Appostille
Ծառայութիւններ
-Հնու եւ կարճ ճանապարհով հիւանդութեան թոշակ SSI-SSA
-Medi-Cal
-CAPI, Sponsor-ով կամ առանց Sponsor-ի
LIVE SCANS
Fingerprinting
Նոտար/Notary
Վստահեցէք մեր տարիներու փորձառութեան եւ արդար աշխատանքին
Ձեր գաղթականական եւ այլ հարցերու շուրջ ամէն հարցումի պատասխանը մեր մօտ կը գտնուի (Section 8, խնամակալ, եւ այլն)

ՄՈՒՉԱՎԱՅԻ ՀԱՅՎԱԿԱՆ ՀՐԱՇՔԸ



Զամկայի Սբ. Օգոստոսի վանքը - Սուչավա

Տ. ՀԵԹՈՒՄ ՔԱՅԱՆԱՅ ԹԱՐԻԵՐԴԵԱՆ Ախթալայի Ս. Աստուածածնի վանքի վանահայր

Ռուսաստանի Սուչավա քաղաքը նշանաւոր է նրանով, որ այն Եւրոպայի միակ քաղաքն է, ուր կառուցուել են վեց հայկական եկեղեցիներ ու երկու վանքեր եւ բոլորն էլ հիմնուած ժԵ-ԺԶ-րդ դարերում: Այս մասին մեզ տեղեկութիւն է տալիս Սիմէոն դպիր Լեհացին իր նշանաւոր ուղեգրութեան մէջ 1608 թ. «Եւ կայր յայս քաղաքս երեք-չորս հարիւր տուն հայի. երեք քարաշէն եկեղեցի եւ երկու վանք վիմաշէն քաղաքն ի

Սուչավայի մասին հայ մատենագրութեան մէջ առաջին յիշատակութիւնը գտնուած ենք ԺԳ-րդ դարի նշանաւոր պատմիչ Վարդան Արեւելցու «Աշխարհացոյցում», ուր ասուած է. «Եւ ի վերայ Լօվայ եւ Սէչովայ գա հասանէ մինչ ի Կոստանդնուպոլիս»: Իսկ Սուչավայի հայ համայնքի մասին առաջին ուղղակի յիշատակութիւնը գտնուած ենք Թէոֆորոս Բ Կիլիկեցու 1388 թ. գրուած կոնդակում, ուր ասուած է. «Յակնաւոր թագաւորանիստ քրիստոսական մայրաքաղաքն ի Լովն եւ յամենայն վիճակն իւր բոլորովին. ի Սերաթն, ի Չիչովն, ի Կամենեցն, ի Լուցկայն»:



դուրս, յոյժ գեղեցիկ եւ պատուական, մինն մերձ եւ հուպ քաղաքին, միւսն երկու մղոն հեռի»:

Հայ մատենագրութեան մէջ Սուչավա քաղաքը յայտնի է Սչովա, Սոչով, Սիչով, Սուչով, Շեչով եւ մի շարք համանման այլ ձեւերով: Սուչավան առանձնակիօրէն նուիրական է նաեւ նրանով, որ Լուովի եւ ընդհանրապէս լեհահայ գաղութի նման համարուած է հիմնուած անեցիների շառաւիղների կողմից, եւ ըստ այդմ՝ ժառանգորդը այդ մեծ մշակութի:

Հայերը Մուլդովիայում եւ Տրանսիլվանիայում հաստատուել են ԺԳ եւ ԺԴ դդ., մեծ թուով հայեր հաստատուեցին այստեղ Լեհաստանից, որպէս առեւտրականներ եւ արհեստաւորներ:

Ահա յայպէս անեցիների շառաւիղների առաջին հանգրուանը ուսումնական-մուլդովական կողմերում դառնում է Սուչավան: Շատ լաւ է բնորոշում անեցիների մուտքը այս հող ուսումնական նշանաւոր պատմաբան Յակոբ Սիրունին. «Անին, Մուլդովայի մէջ, Սուչավան էր ըրեր իր առաջին կայքը»:



Ինչպէս տեսնուած ենք, այստեղ որպէս Արեւելեան Եւրոպայի մի շարք երկրներին ու քաղաքների թեմական կենտրոն յիշուած է Լվովը, իսկ այս թեմին մաս կազմող եւ տարբեր երկրներ ու բնակավայրեր ընդգրկող վիճակներից առաջինը յիշուած է Չիչովն՝ Սուչավան:

Մուլդովայի իշխանապետ Ալեքսանդր Բարին 1401 թ. Սուչավայում գրուած հրովարտակով թոյլ է տալիս հիմնելու մուլդովա-ուսումնական կողմերի առանձին թեմական կառույց, որի առաջնորդանիստ կենտրոնն է դառնում Սուչավան: Հաճկատարից բացի, Սուչավայում հայերը հիմնում են նաեւ Զամկայի կամ Սբ. Օգոստոսի վանքը, իսկ քաղաքում որպէս եկեղեցիներ՝ Սբ. Խաչը, Սբ.

Սուչավայի մի շարք փողոցներ հայկական անուանումներ ունեն, իսկ կենտրոնական փողոցներից մէկը կոչուած է Արմենասկը՝ Հայկական փողոց: Սուչավայում պահպանուել են տեղի հայերի մի շարք տներ, հիւրանոցներ, խանութներ եւ մի շարք այլ շինութիւններ: Հայկական ծաղկուն կեանքով ապրող Սուչավայում 1629 թ. սպասաւորել են 11 հոգեւորականներ: Նրանց անունները թուարկուած



Պոլսահայ որբեր - Սուչավա

Սիմեոնը, Սբ. Աստուածածինը եւ Սբ. Նիկողայոսը: Սուչավայի հայ համայնքի այս բացառիկութիւնը պայմանաւորած է եղել նաեւ առեւտրական կապերով եւ Սուչավայի բարենպաստ դիրքով: Այստեղով էին անցնում մերձվոլգեան շրջաններից Դանուբի ընթացքով շարժուող հայ վաճառականների քարավանների, որոնք պատմութեան մէջ յայտնի են «Կարելէ արմենեշտա» հայկական կառքեր կամ սայլեր անուանմամբ:

Ալեքսանդր Բարին 1401 թ. իր հրովարտակով իրաւունք տալով հիմնելու Սուչավայի թեմը, այնուհետեւ 1408 թ. հոկտեմբերի ութի հրովարտակով Լվովից հրաւիրում է հայ վաճառականներին եւ բնակեցնում Սուչավա, Սիրես եւ Չեւոպիցի քաղաքներում: 1418 թ. Լեհաստանից հրաւիրուած են եւս 3000 հայ բնասնիքներ, որոնցից 700 Սուչավայում է բնակուած:

Հայ համայնք ունեցել է իր քաղաքային վարչութիւնը իր քաղաքապետով եւ 12 հոգուց բաղկացած աւագների խորհրդով, ինչպէս նաեւ հայերին վերաբերուող գործերը քննող հայ դատաւորով:

են նոյն 1629 թ. Հաճկատարում գրուած մի ձեռագրի յիշատակարանում:

Ինչպէս նշուեց, Սուչավայում, բացի Հաճկատարի Սբ. Աստուածածին եկեղեցուց կառուցուել է Զամկան, որը ԺԵ-րդ դարում եղել է տեղի հայոց հոգեւոր առաջնորդական կենտրոնը: Անուանուած է նաեւ Սբ. Օգոստոս, նուիրուած լինելով այս սրբի յիշատակին: Զամկայի մասին լեհ պատմաբան Լ. Շիմանսքին գրում է. «Զամքան, անկասկած հանդիսանում է Սուչավայի հայերի կառուցած ամենակարեւոր հոգեւոր յուշարձանը գերազանցելով մնացեալ բոլորին, ինչպէս իր մեծութեամբ, այնպէս էլ իր արուեստով: Գտնուելով Սուչավայի արեւմտեան ծայրամասի՝ Արենի կոչուած բարձրավանդակում, նա ստացաւ լեհական Զամէք կամ յոգնակի՝ Զամքի անունը, որը լեհերէն նշանակում է բերդ, ամրութիւն կամ ամրոց»:

Զամկայի մասին, որպէս թեմական առաջնորդանիստ կենտրոնի, առաջին յիշատակութիւնը գտնուած ենք 1415 թ. ներքոյ, որպէս առաջնորդ յիշուած է Աւետիք անունով մի եպիսկոպոս:

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
 Enclosed a check for (one year)
 * \$50,00 * \$100,00 (first class) for USA
 \$ 125,00 (Air Mail) for Canada.
 \$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----
 Address: -----
 City: ----- State: ----- Zip Code: -----
 Country: -----
 Tel: ----- Email: -----

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱՎԿՈՒԹԻՆ «ՆՐԱՆՔ ՆԿԱՐՈՒՄ ԷԻՆ ՊԱՏԵՐԱԶՍ»



Վաւերագրող Գրիգոր Աւետիսեանը 1992 թուականին գնացել է Արցախ՝ պատերազմ, նկարահանելու քարոզչական ֆիլմ, որպէսզի բերի, ցուցադրի Հայաստանում, ոգեւորի երիտասարդներին, նրանք էլ գնան կռուելու: Ձինուորների կարիք կար: Սակայն այդ ֆիլմը չի նկարահանուել, քանի որ գնալուց որոշ ժամանակ անց նա տեսախցիկը դրել է մի կողմ ու վերցրել է գէնք:

«Գնացի որպէս վաւերագրող, բայց չկարողացայ մնալ որպէս վաւերագրող, եղալ կապի ծառայութեան մէջ, բերիզուրում եմ ծառայել: Պահ եկաւ, որ խցիկը դրեցի ու վերցրեցի գէնքը: Միզուցէ սխալ էր, բայց քանի որ մասնագիտութեամբ ռեժիսոր եմ, ոչ թէ օպերատոր, այդ սխալն ինձ ներում եմե,- Panorama.am-ի հետ գրոյցում ասաց Գ. Աւետիսյանը:

Մինչ գէնքը վերցնելը, հասցրել էր նկարահանումներ անել. դուկումենտալ կադրերի հիման վրայ յետագայում նկարահանել է ֆիլմ՝ «Խաղում ենք պատերազմ», նուիրված է Արցախեան ազատամարտի հերոս լեգենդար 26-ի Յուրայի նահատակման քանանկայ տարելիցին:

Գրիգոր Աւետիսեանը «Նրանք նկարում էին պատերազմ» գրքի հերոսներից մէկն է:

Գրքում գետեղուած են 2012-2017 թթ. kinoashkharh.am կայքում «Պատերազմի վաւերագրողները» խորագրով հրատարակուած հարցազրույցներ 34 անձանց հետ (հայերէն եւ անգլերէն), որոնք 1991-1994 թթ. եղել են ճակատում եւ վաւերացրել են Արցախեան պատերազմի տարեգութիւնը: Գրքում գետեղուած են նաեւ նրանց կենսագրական տուեալները, ֆիլմագրութիւնը եւ նրանց նկարահանումների ընտրանին՝ երկու խտասկավառակով: Ժողովածուն կազմել են Անահիտ Յարութիւնեանը եւ Ռուզան Բագրատունեանը:

Շնորհանդէսին ներկայ էր ռեժիսոր, օպերատոր Միքայէլ Ղազարեանը:

«Հինգ հոգով ստեղծեցինք պաշտպանութեան նախարարութեան լրատուական ծառայութիւնը: 1992 թուականի Փետրուարին մեկնեցինք Արցախ մինչեւ 1993 թուականը: Երկու նպատակ ունէի՝ օգտակար լինէի հայրենիքիս, կոնկրետ իմ մասնագիտութիւնը ծառայէի հայրենիքիս՝ նկարէի այն, ինչ տեղի էր ունենում», - ասաց Մ. Ղազարեանը:

Նա նշեց, որ ի տարբերութիւն որոշ վաւերագրողների, իր բախտը բերել էր. աշխատելով պաշտպա-

նութեան նախարարութիւնում՝ գէնք է ունեցել, հարկ եղած դէպքում այն օգտագործել է:

«Իրավիճակն է թելադրում քո գործողութիւնները՝ նկարում ես կամ գէնքն ես օգտագործում: Երբ մտնում ես այդ բանի մէջ, անկախ քեզանից շատ բաների մասին ես մոռանում, երբեմն նաեւ ընտանիքիդ, որովհետեւ այնպիսի իրավիճակներ են լինում, որ չգիտես՝ մեկ վայրկեան յետոյ ինչ է լինելու», - ասաց Միքայէլ Ղազարեանը:

Շնորհանդէսին ներկայ վաւերագրող Տիգրան Գէորգեանի կիրն՝ Նունէ Խաչիկօղլեանը, պատմեց, որ ամուսինը դարբանարանի պատերազմի սկզբից մինչեւ վերջ այնտեղ է եղել:

«Պատերազմն իրեն լուակեաց էր դարձել, որեւէ բան չէր պատմում: Բայց իր նկարած կադրերից ամեն ինչ պարզ էր դառնում, թէ ինչ վիճակ է այնտեղ, ինչեր են տեսնում: Երբ նայում էի չմոնտաժուած կադրերը, Ուշուշ էր գալիս տուն: Երեխաներս փոքր էին, մութ ու ցուրտ տարիներ էին, առաջին տարին սարսափելի դժուար էր:


Բաղդասարեան էղիկի հետ ազատագրուած Լաչինն առաջինն են նկարել: Տանն էի, ուշ ժամ էր, արդուկ էի անում, «Հայուրը» արտակարգ թողարկում մտաւ: Ասացին՝ առանց մոնտաժելու ցոյց ենք տալիս ազատագրուած Լաչինը: Արդուկն առանց նկատելու դրել եմ հագուստի վրայ ու մօտեցել հեռուստացույցին: Մէկ ժամ անց գանգում է Տիգրանը, թէ Լաչինն ազատագրուած է: Ասում եմ՝ գիտեմ», - յիշում է տիկին Նունէն:

Անգիր գիտի ամուսնու նկարահանած իւրաքանչիւր կադր:

«Վերջերս իմացել ենք, որ «Արամէ ֆիլմը սկսում է իր կադրերով՝ մթութեան մէջ գրադով կրակում են», - ասաց նա:

Գիրք կազմողներից Ռուզան Բագրատունեանն ասաց, որ 2012 թուականից kinoashkharh.am կայքի համար Ալիսա Գէորգեանը սկսեց «Պատերազմի վաւերագրողները» հարցազրույցների շարք անել, այնուհետեւ հասկացել են, որ շատ հետաքրքիր է ու որոշել են գիրք պատրաստել: Գրքի նիւթերի հաւաքմանն աջակցել են ՀՀ եւ ԼՂՀ պաշտպանութեան նախարարութիւնները, ՀՀ նախագահի աշխատակազմի տեղեկատուութեան կեդրոնը: ՀՀ պաշտպանութեան նախարարութիւնն արդէն ձեռք է

ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑԻ 120-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԸՆԹԵՐՑՈՒՄ



«Ինքն է՝ Չարենցը՝ մարտիկը եւ արքան, մարդու հայրենիքի այս յարատեւ կռուի ոչ մի պահ չուրացած եւ ոչ մի մարտը չըջանցած, արին տուող գահակալ բարձունքի հասած մարտիկը», - այսպէս է Եղիշէ Չարենցի մասին գրել արձակագիր Հրանտ Մաթեոսեանը:

Եղիշէ Չարենցի ծննդեան 120-ամեակի կապակցութեամբ Յունիսի 27-ին ՀՀ Գրողների Միութիւնում անցկացուեց միջոցառում նուիրուած Եղիշէ Չարենցի ծննդեան 120-ամեակին:

«Եղիշէ Չարենցը մեծ գրող է, վարպետ, որն իր գրականութեան մէջ տարբեր գրական ոճեր է համատեղել, նոր լեզուամտածողութիւն ստեղծել: Չարենցը հին աշխարհի խօսքն անցկանում էր իր քուրաչով ու մատուցում հանրութեանը: Չարենցին անդրադարձել են գրողների մեծ մասը եւ իւրովի բացայայտել նրան», - նշեց ՀՀ գրողների միութեան նախագահ Էդուարդ Միլիտոնեանը եւ ընթերցեց Եղիշէ Չարենցին նուիրուած «Ապրեց նկարը» բանաստեղծութիւնը:

Բանաստեղծ, գրականագէտ Արտեմ Յարութիւնեանի խօսքով՝ Եղիշէ Չարենցը զարմանալի ձուլածոյ հոգի էր գրականութեան երկնակամարում, ով ստեղծեց բազմաթանր, բազմածին գրականութիւն, որը դարձաւ մեր բոլոր ժամանակների պարծանքը: «Կարծում եմ, որ մինչ օրս մենք նրան լիովին չենք գնահատել: Չարենցը մեր հայ ժողովրդի վարկանիշն է», - ընդգծեց նա:

Բանաստեղծ, նկարիչ Արեւշատ

Աւագեանն ընդգծեց, որ Եղիշէ Չարենցը մեծ բանաստեղծ է, մեծ պատգամախօս:

1912 թուականին Թիֆլիսի «Պատանի» ամսանախում Եղիշէ Սողոմոնեան ստորագրութեամբ տպագրուած է «Ծաղիկները հեզ» բանաստեղծութիւնը, իսկ 1914-ին Եղիշէ Չարենց ստորագրութեամբ հրատարակուած է 17-ամեայ պատանու «Երեք երգ տխրադալուկ աղջկան» գործը:

1916 թուականին Թիֆլիսում լոյս է տեսնում «Դանթեական առասպել» պոէմը: 1918-1920 թուականներին գրում է «Սոմա», «Ամբոխները խելագարուած» պոէմները եւ «Ողջակիզուող կրակ» շարքը: 1920-1921 թվականներին Չարենցին գրում է «Նախրի երկրից», «Դէպի ապագան», «Բրոնզէ թեւերը կարմիր գալիքի» ռադիոպոէմները:

1922-1924 թուականներին Չարենցի նոր որոնումների շրջանն է, ստեղծում են «Պոէզիոգուռնա», «Կոմալմանախ» ժողովածուները, «Ռոմանս անսեր» պոէմը, «Ասպետական» ռապսոդիան, «Կապկազ» թամաշան: 1915 թուականին նա զինուորագրուած է Քանաքեռում կազմաւորուող հայկական կամաւորական խմբերին եւ որպէս սանիտար, նաեւ որպէս կուռղ զինուոր հասնում է մինչեւ Վան: 30-ականներին Չարենցին Հայաստանի գրողները խորհուրդ են տալիս մեկնել Հայաստանից դէպի Ռուսաստան, քանի որ կանխագրում էին, որ հնարաւոր է բանաստեղծը ստալինեան ռեպրեսիաների զոհը դառնայ:

ՇԱՐԼ ԱԶՆԱԿՈՒՐ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ

Յառաջիկայ Շաբաթ, Յունիսի 15ին 2017, Լիբանանի Քֆարտիպիան ամառանոցին մէջ տեղի պիտի ունենայ համերգ մասնակցութեամբ Շարլ Ազնաւուրի: Միւնոփիս ընկերութեան կողմէ կազմակերպուած սոյն համերգը ներգրաւուած է «Ֆաքրա Միջազգային Փառատօն 2017» ծրագրին մէջ:

Սոյն համերգի կարգաւորումին մաս կը կազմեն Բադրիք Շարթ, Ալան Պոյաճի եւ Moonlight Productions:



2եր Ծանուցումները Վստահեցեք «Մասիս» Շաբաթաթերթին T: (626) 797-7680 massis2@earthlink.net

ՏԱՐԵՎԵՐՁԻ ՀՈՒՆՁՔ՝ ՄԵՐՏԻՆԵԱՆ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

«Ես այն հայի դուռը կ'երթամ, ով խօսում է հայերեն.
Նրա ձեռքի սազը դառնամ, ով երգում է հայերեն.
Նրա ձեռքի գիրքը դառնամ, ով կարդում է հայերեն...»

Գուսան Շահեց

Տարի մը եւս բոլորեց Մերտինեան վարժարանը, տարի մը լի բեղուն գործունէութեամբ եւ փայլուն իրագործութիւններով: WASCh վարկաւորման վերանորոգում, վարժարանի 35 ամեակի տօնախմբութիւններ, դէպի Washington D.C. ճամբորդութիւն, Ապրիլեան յուշահանդէսներ, տարեկերջի քննութիւններ եւ վերջապէս՝ այնքան սպասուած աւարտական հանդիսութիւններ:

րութիւն: Կիրակի, 11 Յունիս, 2017ին, կ.ե. ժամը 3:00ին տեղի ունեցաւ Նախակրթարանի եւ Միջնակարգի բաժիններուն վկայականաց բաշխման հանդիսութիւնը՝ վարժարանիս Արամ եւ Անայիս Գ. Պուլղուրճեան հանդիսասրահին մէջ, ներկայութեամբ մեծ թիւով պատկան մարմիններու ներկայացուցիչներու, հիւրերու, ծնողներու եւ հարազատներու:



Շաբաթ, Յունիս 3, 2017ի առաւօտեան ժամը 10:00ին տեղի ունեցաւ Մանկապարտէզի աւարտական հանդէսը. 25 կրակ ու բոց տղաք ու աղջիկներ խօսեցան, արտասանեցին, երգեցին ու պարեցին հայերէն: Անոնց շնորհալի ելուցիւններով խանդավառուած ծնողներուն ցնծութիւնը անասման էր, իսկ ուսուցիչներուն դէմքերը կը փայլէին հպարտութեամբ՝ ի տես երէկուան ճուտիկներուն համարձակ ու սահուն արտայայտութիւններուն: Հանդէսի աւարտին տեղի ունեցաւ պատշաճ հիւրասիր-

ժամը ճիշդ 3:00ին սրահ մուտք գործեցին Միջնակարգի 17 եւ Նախակրթարանի 14 շրջանաւարտները, ներկաներու յոտնկա ծափահարութիւններով. անոնք բեմին առջեւ իրենց տեղերը գրաւելով կատարեցին ամերիկեան եւ հայկական պետական քայլերգներու երգեցողութիւնը: Վեր. Յովսէփ Մաթոսեանի բացման աղօթքէն ետք, շրջանաւարտները արտասանեցին Մաղձոս 34ը, ինչպէս նաեւ կատարեցին 2 խմբերգներ: Ապա, ճրգ կարգը բեմ բարձրանալով կատարեց 2 խմբային արտասանութիւն-

ներ հայերէն լեզուով եւ մէկ՝ անգլերէն: ճրգ կարգէն աւարտական ուղերձներ կարդացին Նայիրի Գարածեանը եւ Վան Աւանեսեանը հայերէնով, իսկ Ալեքսա Պուչաքեանը՝ անգլերէնով: Ապա անոնք ստացան իրենց վկայականները, գնահատագրերն ու մրցանակները ձեռամբ տնօրէնուհի՝ Տիկ. Լինա Արսլանեանի եւ դաստիարակ ուսուցչուհի՝ Տիկ. Մարգարիտ Մեղրոյեանի: Հրգաբարձական կազմի խօս-

Մերտինեանէն հեռացողներուն, միշտ չիշել այս հաստատութիւնը եւ անոր օրհնաբեր շունչը իրենց վրայ, կառչած մնալ իրենց ազգային ինքնութեան եւ իրենց կարողութեան սահմաններուն մէջ սատար հանդիսանալ իրենց ժողովուրդին եւ հայրենիքին վերելքին: Շրջանաւարտները կատարեցին հայերէն եւ անգլերէն լեզուներով մէկկական խմբային արտասանութիւն, ապա Լարք Գապաքեանը հայերէնով եւ Նաթալիա Օբըլը անգլերէնով կարդացին իրենց աւար-



քը փոխանցեց ատենապետ՝ Դոկտ. Վահէ Նալպանտեան, որ շնորհաւորեց շրջանաւարտներն ու իրենց ծնողները՝ այս ուրախ օրուան առթիւ, նորանոր չափողութիւններ մաղթեց անոնց եւ իր երախտագիտութիւնը յայտնեց բոլոր այն անհատներուն եւ կազմակերպութիւններուն, որոնք այս վարժարանը կանգուն կը պահեն իրենց նիւթական եւ բարոյական աջակցութիւնը բերելով անոր: Օրուան պատգամախօսն էր վարժարանիս 2006ի շրջանաւարտներէն Ներսէս Աբօշեանը, որ յատկապէս շեշտեց Հայ ըլլալու բխտաւորութիւնը եւ անշուշտ մերտինեանցի ըլլալու պատիւն ու առաւելութիւնները: Ան թելադրեց

տական ուղերձները: *ճրգ կարգէն երրորդ բարձրագոյն միջին ունեցող աշակերտուհիին՝ Բեպեքա Գասարճեանը տնօրէնուհիին յանձնեց յուշանուէր մը՝ իր եւ դասընկերներուն կողմէ՝ շրջանաւարտ նկարներու հաւաքածոյ մը որ կը ներկայացնէ իրենց աւօրեան՝ վերջին տարուան ընթացքին: Եւ վերջապէս, Տիկ. Լինա Արսլանեանի եւ դաստիարակ ուսուցիչուհի Տիկ. Սօնա Գասարճեանի ձեռամբ անոնք ստացան իրենց վկայականները, գնահատագրերն ու մրցանակները ու դարձան իսկական շրջանաւարտներ: Յայտագրին մէջ վերջին խօսք առնողը եղաւ Տնօրէնուհին. ան

Շար.ը էջ 19

ST. GREGORY ARMENIAN APOSTOLIC CHURCH
Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Presents
FAMILY FIRST FIRDAY NIGHT
Friday, July 7 2017 @ 7:00 P.M.
2215 East Colorado Blvd., Pasadena

LATINO NIGHT

Միացեք Մեզի Լատինական Գիշերային Հանդիսութեան
Join Us & Enjoy LATINO Music and Food!

For Reservations Please Call:
ALICE: (818) 606-6606
VAHE: (562) 715-8730
VERA {church office}: (626) 449-1523

DONATION: \$25.00

ST. GREGORY ARMENIAN APOSTOLIC CHURCH PASADENA

KEF Time L.A.

With "Internationally acclaimed" ED BILEZIKJIAN Ensemble
Ed Bilezikjian - Clarinet
Antranig Kzirian - Oud & Harry Bogosian - Dumbegs
Plus DJ spinning the top dance hits!

Saturday, August 12, 7:30 P.M.
At Saint Gregory "Geragos Hall" 2215 E. Colorado Blvd., Pasadena CA 91107
For tickets call:
Vera [Church Office]: 626-449-1523
Vahe: 562-715-8730
Donation: \$45
Includes Full Armenian Dinner!

ԱՐԵԳԱԿՆ Է ԵԿԵԼ՝ ԱՄԱՌ ԲԵՐԵԼ ԱՐՄԻՆԱ - ՅԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ



ՊՕՐՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԱԳԻՍԵԱՆ

Արմինա երկրի «Միւնիք» աշխարհի «Քարահունչ-Ջօրաց Քարեր»-ի սարահարթի «Քարգուշատ» լեռների գոգաւորութիւնում լայնածաւալ հարթավայր, երեսները դէպի տիեզերքի հեռուներ չարած, եօթ հազար հինգ հարիւր տարիների վաղեմութեան 203 հսկայ քարեր են կանգնած: «Ջօրաց Քարեր», գօրաւոր մարդկանց արարած այդ կառուցը աշխարհի ամենահին աստղադիտարանն էր: Նա կարող էր լինել այն վայրերից մէկը, որտեղ կարող էին այցելած լինել տիեզերքի հեռուների երկրների մարդիկ: Քարահունչի 85 քարերի վրայ փորագրուած են սկաւաւաւակներ վեր պահած, ճաղատ գլուխներով ու շեղ աչքերով մարդակերպ արարածների նմանութեան պատկերներ: Մամուլ է բուսել նրանց վրայ, այն չի կարողանում ջնջել հազար-հազար դարերին գնացող նրանց յուշը: Քարերի վրայ փորագրութիւնները կարող էին մարդկային յիշողութեան մի պատահարի եղելութիւնը լինել, կարող էր նաեւ շատ վաղ ժամանակներին անոր ակնաստեղ եղած լինելին: Մարդակերպ պատկերների այդ փորագրութիւնները կարող էին տիեզերքի ուրիշ մոլորակների այցելուների պատկերները եղած լինելին, կարող էր Քարահունչի սարահարթը երկիր վայրէջքի իրենց յարմար վայրը ընտրած լինելին: Մարդու հասակի բարձրութեան քարերի երեսին՝ դէպի երկնի հեռուների տարբեր ուղղութիւններ նայող ուղիղ ու շեղ անցքեր են, արմին աստղագէտները տիեզերքի «Կարապի Համաստեղութեան» աստղերն էին դիտել:

Արմին-հայերի Արաց (Յունիս) ամսուայ երրորդ տասնամեակի սկիզբն էր: Մեծ Հայքի Այրարատ, Տայք, Մոկք, Ուտիք, Աղուանք, Աղձնիք, Միւնիք աշխարհների հազար-հազար մարդիկ «Քարահունչ» էին եկել, Արամագդի որդիներ՝ Անահիտի ու Նանէի եղբայր՝ կենսատու լոյսի արեւ աստուած Միհրի տօնախմբութեանը մասնակցելու: Արմին-հայերի Արաց ամսուայ, Գրգուռ (Յունիսի 21) օրուայ այգեբացի «Արեւակայք-Արեւադարձ»-ն էր: Մարահարթ, կեղրոնում փոքր քարերով երիզուած լայն շրջանակ, որտեղ կանգնել էին Արմինայի տաճարների քուրմերը, իշխանները: Միւնիք աշխարհի Միհրի տաճարի քուրմը, շրջանակի կեղրոն էր հրաւիրել Արատաս երկրի Մեծամոր ոստանի աստղագէտ քուրմ Արագին՝ կատա-

րելու Միհրի արեւադարձ-արեւակայքի յայտնութիւնը: Այսպէս էր նա խօսել:

«Արմինա աշխարհի մեհեանների քուրմեր, իմաստուն իշխաններ, աշխարհական մարդիկ՝ գնացէ՛ք քարերի մօտ, նրանց անցքերին ամրացուած թափանցիկ նիւթի հայելիով դիտեցէ՛ք «Միւր Կաթին» աստղաբոյլից արեգակի անցումը երկրի հիւսիսային լայնութիւնից դէպի հարաւ: Թմբուկներ զարկէ՛ք, փողեր հնչէ՛ք արեգակն է եկել, զուարթ շողերով աւետում Արմինա աշխարհի Արաց ամսուայ, Գրգուռ օրուայ այգեբացի գալուստը (Յունիս ամիս, օրը 21): Հորիզոնում լոյսի շողեր են, արեգակն է եկել ամառ բերելու Արմինա աշխարհին: Իշխաններ, աշխարհական մարդիկ «Ջօրաց Քարեր»-ի շուրջը պար բռնէ՛ք, գրկեցէ՛ք նրանց, շոյէ՛ք նրանց մամուլը՝ Արմինա-Հայաստան աշխարհում ամառ է: Ամառ, արեգակ, իր շիկնած վարսերով շոյում ծառերի սաղարթները, Արա աստուծոյ մէջքի գօտիի հազար գոյն հոսում նրանց երեսներին: Արտերի կանաչին ոսկէ շապիկ փռում, ցորեանի հասկեր են պայթում, գեփիւռի քնքշանքի թեւերին յենած ոսկէպար են բռնում, արտերում կրակի հանդէսի հրավառութիւն է: Հայոց աստուծաների «Միւր Կաթին»-ի իրենց տաճարից Արմինա աշխարհ բերած «Միւրան»-ն է հասնում, տեսե՛լ էք հասած պտուղներով ծիրանի ծառ, ձեր հոգիների տաճարներում նախնիների հաւատի ջահի լոյսը չի՞ բռնկել:

«Հայ Արիական Միաբանութեան Հոգեւոր Յանձնախումբ»-ի քրմական դասի նախաձեռնութեամբ, Յունիսի ամսուայ 21-ին, Քարահունչի սարահարթի տարածքում, Արմին-հայեր տօնախմբել են «Ողջախոհութեան, իմաստութեան, Մայրերի Երկունքի Պահպան, Մանչերի Հովանաւոր» Նանէ աստուածուհու տօնը, նաեւ կատարելու ամառային արեւադարձի ծէսը: Քուրմ Արմոզը, Նանէ-ին նուիրուած ծաղիկների երգեր էր կատարել: Գինի էին ըմպել, ծիսական պարել կատարել ի փառս Նանէի ու արեգակի արեւադարձի յայտնութեան: Արմոզը յայտարարել, որ «Քարահունչ»-ում էին տօնախմբել Նանէի տօնը՝ յիշատակելու հայրենի գիտութեան երախտաւոր, շնորհաշատ գիտնական Պարիս Հերոնուս, որը բացառապէս է այդ կառուցի աստղադիտարան լինելը եւ նրա կապը արտերկրային այցելուների հետ:

Հայ արի մարդ, անչափ փոք-

րացած Հայաստան երկրում ես, քուցեղի հանձարի լոյսն ես աշխարհներ ճառագում... ազգերի հետ ժողովի նստում... կաս, քու նախնիներ գրելու ու յիշատակութեան արժանի շատ գործեր են կատարել... քու աշխարհին մօտիկ շատ երկրների ժողովուրդների յետնորդներ չկան: Քու ցեղի մարդկանց առանձին սերունդները իրենց նախնիների ականջութիւնների ջահերը փոխանցում են նոր սերունդներին եւ այդպէս շարունակ... ցեղիդ բերել մինչեւ նոր օրեր...: Ես, «Մուսա Լերան» լեգէոնական գիւնուոր Արմենակի գաւակ, իմ կեանքի քսան ու աւել տարիներին, ցեղի նախնիների, դուշմանի սիրտը պատուող լեռնական քաջերի սխրանքն եմ երգել, նրանց յիշատակութեան արժանի գործերը պատարագել, նրանց ջահի մի լոյսի ծուկն փոխանցել սերունդներին:

Այսպէս, հազար-հազար տարիներ յետոյ էլ վանական Նարեկի սրտում պայթել էր նախնիների աստուածների իմաստութեան հրդեհի բոցերի կրակը, Աստղիկ դիցուհու վարդավառին տօնին նուիրել՝ իր իմաստուն մտքին փոխանցուած նախնիների ջահի լոյսի մի փունջ՝ Գոհար վարդն վառ առեալ ի վեհից վարսիցն արփեմից:

Ի վեր ի վերայ վարսից ծաւալէր ծաղիկ ծովային:

Ի համատարած ծովէն պղպջեր գոյնն այն ծաղկին, Երփին երփնուցակ ծաղկին շող-շողեր պտուղն ի ծղին:

Եւ նորէն ուրիշ մի իմաստուն այր՝ Ներսէս Շնորհալի, նախնիների լոյսի ջահի շողերից երկնել արեւադարձին նուիրուած «Առաւուս Լուսոյ» եւ ուրիշ երեք տաղեր էլ նուիրել նախնիների հաւատի արեգակի անուշ, տաքուկ լոյսին:

Քու նահապետի երկրից հեռացած Արեւորդի Արմին հայ մարդ,

ամառ է... յիշում ես երկրիդ ամառը...: Չէ, այն ուրիշ ամառ էր: Այնտեղ արեւոտ լոյս էր: Ոստանը գրկել էին Արարատեան դաշտի մայրացած այգիները, ցորեանի արտերը «Միւրան»-ի հագուստ կապել Այրարատ աշխարհին: Ամառ... մարդ կարծես թեթեւանում էր, կարծես թեւէլու էր հայոց երկնականամարում անցնող կուռնիների երամներին հասնելու, հայրենի երկրից անուշ խապրիկ տանելու օտարութիւնում տուայտող արմիններին: Քայլում էինք արեւի հետ, չէինք վախենում անոր ջերմից, այն մեր մարմիններն էր զօրացնում: Արեւին խրոխտ քայլում մայր ոստանի փողոցների մայթերով, հսկայ սօսիները իրենց խոշոր տերեւները փռում մեր վրայ, ոստերից կախուած գնդիկներն էին օրօւում, զարկում իրար, ցաւից խշշում: Պարթեւը սպաննեց նրանց պաշտամունքին նուիրուած «Սօսանուէր Իշպուրհի-Անուշաւան»-ին, որ իր վախճանը չգուշակէր...: Ամառ, Շաբաթ, Կիրակի օրերին մանչերիդ հետ գնում ոստանի մանկական այգիներ, խաղում, վազում, ջուր էին ցանում իրար վրայ, տիկնոջդ հետ նստարաններին նստած տան պակաս մնացած գրոյցը շարունակում: Ցայտադիւրներից շատրուանող վճիտ, մաքուր ջուր ըմպում, Հայ մարդ այստեղ ցայտադիւր չկայ, «Կուլա»-ով ջուր ծախող տղայ չկայ, հովեկներ զարմանում ցայտադիւրներից շատրուանով ջրերի հոսքից, կուշտկուշտ խմում... առանց վճարի էր: Այստեղ մանկական այգիներ չկան, ո՛ւր են վազվզում, նրանց նոյնիսկ բակ չեն թողնում, մեղք չեն:

Ամառ էր... հագստեան օրերին գնում էինք քաղաքից հեռու, ըմբռնելու երկրիդ բնութեան

Շար.ը էջ 19

Հետաքրքրուած եմք իրենց փոխարժեքով ստանալ՝

- Հայկական երգարաններ
- Կիլիկիոյ պատմական գիրքեր
- Ցեղասպանութեան հետ առընչուած գիրքեր

Եթէ ունիք մասն գիրքեր եւ կը փափաքիք զանոնք վաճառել, կը խնդրենք մեզի հետ կապ հաստատել հեռաձայնելով կամ e-mailով՝ **ՎԱՀԷ Ա.ՋԱՊԱՀԵԱՆԻՆ:**

Vahe Atchabahian
 1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104
Tel: 626-354-5924
 vamedia@yahoo.com

Գերմանիայի Հաւաքականն Առաջին Անգամ Յաղթեց Կոնֆեդերացիաների Գաւաթում



Ֆուտպոլի Գերմանիայի հաւաքականը պատմութեան մէջ առաջին անգամ նուաճեց ՖԻՖԱ-ի Կոնֆեդերացիաների Գաւաթի յաղթողի կոչումը:

Ռուսաստանում աւարտուած Կոնֆեդերացիաների գաւաթի 8-րդ խաղարկութեան եզրափակիչում աշխարհի գործող ախոյեանը նուազագոյն հաշուով առաւելութեան հասաւ Հարաւային Ամերիկայի գաւաթակիր Զիլիի հաւաքականի նկատմամբ:

«Սանկտ Պետերբուրգ Արենա» ստադիոնում կայացած հանդիպման միակ գոլը 20-րդ րոպէին խփեց կիսապաշտպան Լարս Շտինդլը: Գերմանիայի հաւաքականը յաղթական կոլը խփեց մրցակցի պաշտպանի կոպիտ սխալից յետոյ:

Յիշեցնենք, որ պրոնզէ մետալները բաժին էին հասել Եւրոպայի գործող ախոյեան Պորտուգալիայի հաւաքականին, որը երրորդ տեղի համար խաղում լրացուցիչ ժամանակում 2:1 հաշուով յաղթել էր մեքսիկացիներին:

1997 թուականից անցկացուող Կոնֆեդերացիաների Գաւաթում նախկինում յաղթել են նաեւ Պրագիլիան (4 անգամ), Ֆրանսան (2 անգամ) եւ Մեքսիկան (1 անգամ): Եւրոպական մամուլի համաձայն՝ սա Կոնֆեդերացիաների գաւաթի վերջին խաղարկութիւնն է:

Աւանդաբար այս մրցաշարն անցկացուած է աշխարհի առաջնութեան կազմակերպիչ երկրում: Խաղարկութեան մասնակցում են 6 մայրցամաքային ախոյեանները, աշխարհի ախոյեանը եւ կազմակերպիչ երկրի հաւաքականը:

Այս տարի մասնակցեցին Ռուսաստանը (կազմակերպիչ), Գերմանիան (2014թ. աշխարհի ախոյեան), Աւստրալիան (2015թ. Ասիայի գաւաթակիր), Զիլին (2015թ. Ամերիկայի գաւաթակիր), Մեքսիկան (2013թ. Ոսկէ գաւաթի եւ 2015թ. Ոսկէ գաւաթի տիրակալների անցումային հանդիպման յաղթող), Նոր Զելանդիան (Օվկիանայի ազգերի գաւաթակիր), Պորտուգալիան (2016թ. Եւրոպայի ախոյեան) եւ Կամերունը (2017թ. Աֆրիկայի ազգերի գաւաթակիր): Ռուսաստանը, Պորտուգալիան ու Զիլին առաջին անգամ են մասնակցում այս մրցաշարին:

Լեզնդար Մենի Պակյաոն Զկարողացաւ Պաշտպանել Տիտղոսը

Պրոֆեսիոնալ բռնցքամարտի կիսամիջին քաշային կարգում WBO վարկածով աշխարհի ախոյեան Մենի Պակյաոն չկարողացաւ պաշտպանել տիտղոսը: Աւստրալական Բրիսբենում կայացած մենամարտում ֆիլիպինցի լեզնդար բռնցքամարտիկը մրցավարների միաձայն որոշմամբ պարտուեց աստրալացի Ջեֆ Հորնին՝ 111-117, 113-115, 113-115:



Սա 38-ամեայ Պակյաոնի 7-րդ պարտութիւնն էր պրոֆեսիոնալ ունիվերսալ, որում նա տարել է 59 յաղթանակ (38 նոկաուտ) եւ 2 մարտ աւարտել ոչ ոքի: 29-ամեայ Հորնը տարաւ 17-րդ յաղթանակը:

«Չելսին» Կը Վաճառի Դիեգո Կոստային

Լոնդոնի «Չելսի» սեփականատեր Ռոման Աբրամովիչն ու թիմի գլխավոր մարզիչ Անտոնիո Կոստեն քննարկել են սպանացի յարձակող Դիեգո Կոստայի հետագան «Չելսիում»: Խաղացի մասնագիտը ռուսաստանցի միլիարդատիրոջը ներկայացրել է Դիեգո Կոստայից հրաժարուելու պատճառները:

Դրանից յետոյ հաստատուել է, որ այս տրանսֆերային պատուհանի ընթացքում Դիեգո Կոստան կը վաճառուի, հաղորդում է The Times-ը: Աւելի վաղ, Կոստան յայտարարել էր, թէ Կոստեն իրեն առաջարկել է նոր թիմ փնտռել:

ՓԱՍԱՏԻՆԱՅԻ Հ.Մ.Մ.Ի ՖՈՒՏՊՈՒԼԻ ԽՈՒՄԲԸ ՅԱՂԹԱԿԱՆ



Անցեալ Կիրակի Յուլիսի 2ին, 2017 Փասատինայի «Հ.Մ.Մ.-Անժել» ֆուտպոլի խումբը հետաքրքրական մրցում մը ունեցաւ Լոս Անճելոսի «Տինամօ-Շախթոր» խումբին դէմ: Մրցումն աւարտեցաւ 3-0 արդիւնքով ի նպաստ Հ.Մ.Մ.Ի:

Կիսաեզրափակիչ մրցումը տեղի պիտի ունենայ յառաջիկայ Կիրակի Յուլիսի 9ին, 2017, «Ինթեր Լոս Անճելոս» խումբին դէմ (Inter L.A.) հասցէն՝ Rio De La Park 1900 N. San Fernando Road, Los Angeles, CA 90065

Grand Chess Tour. Լեւոն Արոնեանը Մրցանակային Տեղ Չգրաւեց



Բելգիայի Լիովեն քաղաքում աւարտուած Grand Chess Tour-ի հերթական փուլում աւարտուեց նաեւ կայծակնային խաղի մրցաշարը: Վերջին խաղային օրը տեղի ունեցան 10-18-րդ տուրների պարտիաները:

Հայկական շախմատի առաջատար Լեւոն Արոնեանը 10-րդ տուրում սպիտակներով պարտուել է ֆրանսացի Մաքսիմ Վաշյե-Լագրավին, 11-րդ տուրում սեւերով պարտուել է ուկրաինացի Վասիլի Իվանչուկին, 12-րդ տուրում սպիտակներով ուժեղ է գտնուել ռուս Յան Նեպոմյաչաչից, 13-րդ տուրում սպիտակներով պարտութեան է մատնել վրացի Բաադուր Ջոբավային, 14-րդ տուրում սեւերով ոչ ոքի է խաղացել հոլանդացի Անիշ Գիրիի հետ, 15-րդ տուրում սպիտակներով ոչ ոքի է խաղացել աշխարհի ախոյեան Մագնուս Կարլսենի հետ, 16-րդ տուրում սեւերով խաղաղ դաշն է կնքել ամերիկացի Ուեսլի Սոյի հետ, 17-րդ տուրում սպիտակներով յաղթել է հնդիկ Վիշվանաթան Անանդին, իսկ 18-րդ տուրում սեւերով ոչ ոքի է խաղացել ռուսաստանցի Վլադիմիր Կրամնիկի հետ: Կայծակնային խաղում Արոնեանը վաստակել է 9.5 միաւոր եւ Կրամնիկի հետ բաժանել է 4-5-րդ տեղերը, իսկ յաղթողի տիտղոսը նուաճել է 14.5 միաւոր վաստակած Մագնուս Կարլսենը:

Արագ շախմատի եւ կայծակնային խաղի մրցաշարերի համագումարում հայ գրոսմայստերը վաստակեց 18.5 միաւոր եւ Վլադիմիր Կրամնիկի հետ բաժանեց 5-6-րդ տեղերը: Յաղթողի տիտղոսը նուաճեց 25.5 միաւոր ունեցող Մագնուս Կարլսենը:

Մրցաշարի արդիւնքում Լեւոն Արոնեանը կը ստանայ 11.250 տոլար պարգեւավճար:

«Մանչեսթեր Եունայթեդը» Պատրաստ է 80 Միլիոն Եւրօ վճարել Խամես Ռոդրիգեսի Համար

«Մանչեսթեր Եունայթեդը» ջանքեր է գործադրում այս տրանսֆերային պատուհանի ժամանակ Մադրիդի «Ռեալ» եւ Կոլումբիայի հաւաքականի կիսապաշտպան Խամես Ռոդրիգեսին ձեռք բերելու ուղղութեամբ: Անգլիական ակումբը պատրաստ է 25-ամեայ ֆուտպոլիստի համար վճարել 80 միլիոն եւրօ, հաղորդում է Football Italia-ն:

Խամես Ռոդրիգեսը դժգոհ է Արքայական ակումբում իր վիճակից, քիչ խաղաժամանակ ստանալուց եւ ցանկանում է հեռանալ:

Սպանիայի անցած առաջնութիւնում նա մասնակցել է 22 հանդիպման՝ 13-ը մեկնարկային կազմում: Խփել է 8 գոլ, կատարել 6 գոլային փոխանցում: